

ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բացահայտելով Գյումրու երիտասարդության ներուժը

զեկույց



Գյումրի, 2021



ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ Բացահայտելով Գյումրու երիտասարդության ներուժը

զեկույց



Գյումրի, 2021

Յետազոտական ծրագրի աշխատանքային թիվ

Ծրագրի ղեկավար՝ Կարեն Տերտերյան

Ծրագրի օգնական՝ Լարիսա Ժամակոչյան

Ծրագրի փորձագետ՝ Արթուր Նաջարյան, Աննա Եղոյան

Ձեկույցի հեղինակներ

Երիտասարդական հետազոտող, սոցիոլոգ՝ Մարինա Գալստյան

Սոցիոլոգ՝ Արման Մելքոնյան

Խմբագիր՝ Ռոզա Յովհաննիսյան, Կարեն Տերտերյան

Ձևավորող՝ Լիլիթ Արշակյան, Լալա Ղազարյան

Էջադրումը՝ «Էլիտրադո պրինտ» ՍՊԸ-ի

Սույն զեկույցը պատրաստվել և հրատարակվել է Գյումրու «Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 2020 թվականին իրականացված «Գյումրու երիտասարդական քաղաքականության փաստարկում» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ և Գյումրու համայնքապետարանի, «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի և Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հետ համագործակցությամբ:

Ձեկույցում ներկայացված են Գյումրու երիտասարդության հարցերին առնչվող հիմնախնդիրներն ու հնարավորությունները, Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակման համար անհրաժեշտ գերակայությունները և երիտասարդական տեղական քաղաքականության իրականացման մեխանիզմների վերաբերյալ առաջարկություններ:

Աշխատանքը նախատեսված է ՀՀ կառավարության համապատասխան գերատեսչությունների, ՏԻՄ-երի, միջազգային գործընկերների, երիտասարդության հարցերով հետաքրքրված կազմակերպությունների, փորձագետների և երիտասարդության լայն շրջանակի համար:

Յետազոտությունն իրականացվել է «Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի» կողմից:

Ցանկացած ձևով սույն զեկույցի ամբողջական վերարտադրումը, վերամշակումը կամ թարգմանությունը կարող է իրականացվել միայն ԵՆԿ ՀԿ-ի գրավոր համաձայնությամբ: Ձեկույցի որևէ հատվածի վերարտադրումը թույլատրելի է միայն շահույթ չհետապնդող, ոչ առևտրային նպատակներով՝ սույն սկզբնաղբյուրին պատշաճ հղման պայմանով:

Սույն զեկույցը հնարավոր է ներբեռնել www.yic.am կայքից:



Ձեկույցի տպագիր հրատարակություն, 2021

Ձեկույցի էլեկտրոնային հրատարակություն, 2021

Գյումրու «Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	6
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	6
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	8
ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱԿԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	8
ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԸ	16
ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	37
Գործողությունների առաջնահերթություններ	41
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	43
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	45
ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ	48
ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ	49
ՆԵՐԴԻՐՆԵՐ	49
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	50
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ	50
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ	58
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ	60

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԵՆԿ** Գյումրու «Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն»
հասարակական կազմակերպություն
- ՀԿ** հասարակական կազմակերպություն
- ՀՀ** Հայաստանի Հանրապետություն
- ՀՈԱԱ** հաշմանդամություն ունեցող անձ/անձինք
- ՄԱԿ** Միավորված ազգերի կազմակերպություն
- ՏՏ** տեղեկատվական տեխնոլոգիաներ
- ՏԻՄ** տեղական ինքնակառավարման մարմին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գյուժիրու Երիտասարդության իրավիճակի վերլուծություն» զեկույցը մշակվել է Գյուժիրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից 2020 թ.-ին իրականացրած «Գյուժիրու Երիտասարդական քաղաքականության փաստարկում» ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

Նախատեսվում է, որ հետազոտությունը փաստական հիմք է հանդիսանալու Գյուժիրու Երիտասարդական տեղական քաղաքականության մշակման համար: Հետազոտությունը միտված է Գյուժիրու Երիտասարդների կարիքների և ձգտումների բացահայտմանը, ինչպես նաև դրանց հասցեական լուծմանն ուղղված առաջարկությունների մշակմանը:

Հետազոտությունն իրականացվել է 2020 թ. հուլիսից մինչ 2021 թ. փետրվար ժամանակահատվածում՝ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից:

Չեկույցը ներկայացնում է հետազոտության նպատակն ու խնդիրները, մեթոդաբանությունը, արդյունքների վերլուծությունը, հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները: Այն ընդգրկում է նաև հետազոտության ընթացքում հանդիպած խնդիրներն ու սահմանափակումները: Հավելվածները ներառում են հետազոտության գործիքները և մասնակիցների ցանկը:

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը երախտագիտություն է հայտնում հետազոտության մասնակից երիտասարդներին, փորձագետներին, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին հետազոտությանն աջակցելու և իրենց կարծիքներն ու մտքերը մեզ վստահելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում Գյուժիրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի» թիմին հետազոտությանը աջակցելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է՝ իրականացնել Գյումրու երիտասարդների իրավիճակի վերլուծություն հետևյալ ուղղություններով՝

1. ուսումնասիրել և վերլուծել համայնքի երիտասարդության հիմնահարցերն ու հնարավորությունները, այդ թվում՝ ֆինանսական ռեսուրսները,
2. բացահայտել Գյումրու երիտասարդների կարիքները, խնդիրները, ձգտումներն ու ներուժը,
3. փաստարկված բացահայտել Գյումրու երիտասարդությանն առնչվող բարեփոխումների առաջնահերթությունները՝ հիմք ստեղծելով ներառական և մասնակցային երիտասարդական տեղական քաղաքականության փաստաթղթերի մշակման համար,
4. ներկայացնել հիմնախնդիրների լուծման որոշակի առաջարկություններ՝ նպաստելով երիտասարդությանն առնչվող հանրային քաղաքականությունների բարելավմանը:


ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակին ու խնդիրներին հասնելու համար կիրառվել են որակական ու քանակական մեթոդներ:

Հարցումներ

Առցանց հարցում

Հետազոտության ընթացքում կիրառվել է քանակական առցանց հարցման մեթոդաբանությունը: Հարցումներն իրականացվել են Գյումրու երիտասարդների շրջանում, դրանց մասնակցել է 370 երիտասարդ: Առցանց հարցման հղումը¹ տարածվել է սոցիալական ցանցերի միջոցով, ինչպես նաև շահակից կազմակերպությունների կայքէջերով:



Գծապատկեր 1. Առցանց հարցման մասնակիցների սեռատարիքային կազմը (N=370, %)

¹ Երիտասարդների շրջանում տարածված առցանց հարցում՝ <https://forms.gle/FRQKfPN9r7pzmwni6> [22.02.2021]:

Որակական հարցազրույցներ

Անհատական խորին հարցազրույցներ են իրականացվել Գյումրու երիտասարդական ոլորտի հիմնական տեղեկատուների, ինչպես նաև պետական և երիտասարդական տեղական քաղաքականություն մշակողների հետ: Իրականացվել է հինգ հարցազրույց՝ առցանց ձևաչափով:

Խմբային քննարկումներ

Խմբային քննարկումներ են իրականացվել երիտասարդական աշխատողների, կրթական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, երիտասարդական կառույցների և երիտասարդական խմբերի ներկայացուցիչների, ինչպես նաև ակտիվ երիտասարդների հետ: Ընդհանուր առմամբ իրականացվել է չորս խմբային քննարկում՝ առցանց ձևաչափով:

Փաստաթղթերի վերլուծություն

Որպես փաստաթուղթ ուսումնասիրվել են հետևյալ աղբյուրները՝

- երիտասարդական ուսումնասիրությունների երկրորդային վերլուծություն,
- վիճակագրական տվյալներ,
- ֆինանսական ռեսուրսների ուսումնասիրություն,
- երիտասարդական ոլորտի իրավական փաստաթղթեր:

Չեռագոտության սահմանափակումները

Չեռագոտությունն իրականացվել է Հայաստանի նորագույն պատմության համար ծայրահեղ ծանր ժամանակներում. 2020 թ. մարտից երկրում տիրում էր արտակարգ դրություն՝ պայմանավորված COVID-19 համավարակով, իսկ 2020 թ. սեպտեմբերի 27-ից Հայաստանը ներքաշվել էր Ադրբեյջանի կողմից սանձազերծված պատերազմի մեջ: Չեռաբար, չեռագոտության շրջանակներում երիտասարդների կարիքներն ու հիմնախնդիրները բացահայտող հարցերն անմիջականորեն կրում են այս երկու իրողությունների ազդեցությունը:

Առցանց հարցմանը մասնակցել է 370 երիտասարդ, ընդ որում ճնշող մեծամասնությունը՝ աղջիկներ: Հարցման մասնակիցների թիվն ավելացնելու նպատակով իրականացվել են մի շարք գործողություններ. առցանց հարցման հղումը տարածվել է սոցիալական մեդիայում, շահակից կազմակերպությունները ևս տարածել են հարցման հղումը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գյուժրու երիտասարդների իրավիճակին անդրադառնալիս անհնար է շրջանցել ՀՀ երիտասարդների շրջանում առկա հիմնական խնդիրներն ու իրավիճակը:

Այս հետազոտության շրջանակներում հիմք է ընդունվել «երիտասարդ» հասկացության հետևյալ սահմանումը.

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025 թթ. հայեցակարգում «երիտասարդ» հասկացությունը սահմանված է հետևյալ կերպ.

«Երիտասարդ՝ Հայաստանի Հանրապետության 16-30 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 16-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում»²:


Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2020 թ. տարեսկզբին Հայաստանում 15-29 տարեկան երիտասարդների թիվը կազմել է **577 600**, որից շուրջ **50,2%-ը տղաներ, իսկ 49,8%-ը՝ աղջիկներ**³: Ընդ որում, երիտասարդների շուրջ **60%-ը քաղաքաբնակ է, իսկ 40%-ը՝ գյուղաբնակ**⁴:

Ինչպես ներկայացված է Գծապատկեր 2-ում, համաձայն ՀՀ տարիքային բուրգի 2010-2020 թթ. համեմատական վերլուծության, կրճատվել է հատկապես երիտասարդների թվաքանակը, մասնավորապես՝ 15-19, 20-24 տարիքային խմբում, ինչը վկայում է, որ Հայաստանն աստիճանաբար «ծերացող» հասարակության վերածվելու ռիսկ ունի:

² ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում, <https://old.erit.am/media/2016/06/1980.pdf> [12.12.2020]:

³ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2020, Մաս 2. Բնակչություն, ՀՀ վիճակագրական կոմիտեի, էջ 45-46, https://armstat.am/file/article/demog_2020_2.pdf [22.12.2020]:

⁴ Նույն աղբյուրը, էջ 53-54:



Գծապատկեր 2. ՀՀ բնակչության տարիքային բուրգը, 2010 և 2020 թթ. տարեսկզբին, աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե⁵

Միգրացիա

Ժողովրդագրական ոլորտում հանդիպող խնդիրներից է նաև **միգրացիան**: Ինչպես փաստում են ոլորտային հետազոտությունները, վերջին տարիներին նկատելի է միգրացիայի երիտասարդացում⁶: Աշխատանքային ու երկարատև միգրանտների մեջ մեծ է 35-55 տարիքային խմբի տեսակարար կշիռը, սակայն նկատելի է երիտասարդների թվի ավելացում⁷:

«Ըստ միգրացիայի ոլորտում 2017 թ.-ին իրականացված հետազոտական տվյալների՝ միգրացիայում գտնվող երիտասարդների թիվը 18-34 տարիքային խմբում 2016 թ. համեմատ ավելացել է 3,5%-ով: Այդ տարիքային խմբում մեծ է նաև միգրացիոն տրամադրությունների աճը: Առավել ակտիվ՝ 35-55 տարեկանների միգրացիոն խմբում միգրացիայում գտնվողների թիվը աճել է 3,6%-ով⁸: Ինչպես տեսնում ենք, երիտասարդների տարիքային խմբի աճի ցուցանիշները մոտենում են միջին ակտիվ աշխատանքային տարիքում գտնվող խմբի ցուցանիշներին: Սա բավական մտահոգիչ է, քանի որ մեկ անգամ ևս հավաստում է այն միտքը, որ Հայաստանից դուրս միգրացիայի պատկերը երիտասարդանում է: Միգրացիան միջին սերնդից փոխանցվում է երիտասարդներին և դառնում վերարտադրվող երևույթ: Դեռևս 2014 թ.-ին, ըստ որակական հետազոտական տվյալների, միգրացիան միտում ուներ դառնալու սերնդից սերունդ փոխանցվող երևույթ՝ ինչպես ընտանեկան, այնպես էլ համայնքային մակարդակում⁹: Նշենք նաև, որ միգրացիայում գտնվողների մեջ գերակշռող է տղամարդկանց թիվը: Կին-տղամարդ փոխհարաբերակցությունը կազմում է 29%-ը 71%-ի հարաբերակցությամբ»¹⁰:

⁵ Նույն աղբյուրը, էջ 37:

⁶ Մարդկային զարգացման ազգային զեկուլց 2018/2019, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019 թ., <https://www.am.undp.org/content/armenia/en/home/library/the-right-to-a-future--youth-that-transforms-armenia.html> [22.02.2021]:

⁷ Նույն աղբյուրը:

⁸ Նույն աղբյուրը:

⁹ Նույն աղբյուրը:

¹⁰ Նույն աղբյուրը:

Առողջապահություն

Երիտասարդական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ երիտասարդների համար հիմնական խնդիր են կրթական հնարավորությունների կամ կրթական ծառայությունների որակը և հասանելիությունը, զբաղվածության հիմնախնդիրները, ինչպես նաև առողջապահական խնդիրները^{11 12 13}:

«[Բուժհաստատություն] Կանխարգելիչ այցերը երիտասարդների շրջանում գրեթե ընդունված պրակտիկա չէ: Ուսումնական հաստատություններում ևս այս հարցն անուշադրության է մատնված: Ուսանողները տեղյակ չեն, թե ինչ առողջապահական ծառայություններ կան բուհերում: Որոշ ուսանողներ նշում էին, որ ֆիզկուլտուրայի դասերից առաջ երբեմն չափել են իրենց արյան ճնշումը, բայց այդ երևույթը կանոնավոր բնույթ չունի: Իրավիճակը մտահոգիչ է նաև դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում, որոնցում բժշկական ստուգումները կրում են ձևական բնույթ: Այսպիսով, Հայաստանում լուրջ խնդիրներ կան՝ կապված առողջապահական ծառայությունների հասանելիության և դիմելիության հետ»¹⁴:

ՀՀ բնակչության 15 տարեկան և բարձր տարիքային խմբում առավել տարածված են հետևյալ ռիսկի գործոնները՝ ծխախոտի ամենօրյա օգտագործում, որի տարածվածությունը ողջ բնակչության շրջանում կազմում է 24% (տղամարդկանց շրջանում՝ 50%, իսկ կանանց շրջանում՝ 2,3%), գիրություն ու ճարպակալում՝ 49%, ֆիզիկական թերակտիվություն՝ 17,5%, ավիոհոլի օգտագործման չարաշահում՝ 8,2%, (տղամարդկանց շրջանում՝ 15%): Հայաստանում ծխախոտի համար զուգործ ծախսողները հիմնականում արական սեռի ներկայացուցիչներն են (94,7%): Ընդ որում, ամեն օր ծխելու հանգամանքը խոստովանել է հարցվածների 14,8%-ը, իսկ 3,5%-ը նշել է, որ ծխում է ժամանակ առ ժամանակ: Նույնն է պատկերը նաև ավիոհոլ օգտագործելու պարագայում. պարբերաբար օգտագործելը խոստովանել է 11,2%-ը, հազվադեպ օգտագործելու հանգամանքը նշել է 46,6%-ը¹⁵:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդների շրջանում առկա է հակասական դիրքորոշում սեռականության, սեռական և վերարտադրողական առողջության վերաբերյալ: Հարցվածների 4/5-րդից ավելին կարծում են, թե կինն իրավունք չունի տևորինելու իր մարմինը և սեռականությունը: Հարցվողները կարծում են, թե կանայք պետք է ենթարկվեն հայրիշխանական մտածելակերպի նորմերին և չափանիշներին¹⁶: Այդուհանդերձ, հարցված երիտասարդները (18-24 տարեկան) ավելի քիչ են հակված սեռականության մասին կարծրատիպերին: Ի տարբերություն տղամարդկանց՝ երիտասարդ կանայք առավելապես չեն համաձայնում կարծրատիպերի վերարտադրությանը¹⁷:

¹¹ Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. Գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, ԵՄԻԿ, ԵՈՒԻ, 2015 թ., <https://escs.am/am/news/4909> [12.12.2020]:

¹² ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն, ԵՄԻԿ, ԵՈՒԻ, Երևան, 2013 թ., <https://escs.am/am/news/4908> [12.12.2020]:

¹³ Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018/2019, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019 թ., <https://www.am.undp.org/content/armenia/en/home/library/the-right-to-a-future-youth-that-transforms-armenia.html> [22.02.2021]:

¹⁴ Նույն աղբյուրը:

¹⁵ Նույն աղբյուրը:


¹⁶ Men and Gender Equality In Armenia, Report on sociological survey findings, UNFPA in Armenia, Yerevan, 2016, էջ 26, https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf [01.12.2020]:

¹⁷ Նույն աղբյուրը, էջ 214:

Չբաղվածություն

Այժմ հակիրճ անդրադառնանք ՀՀ երիտասարդներին վերաբերող ևս շատ կարևոր ոլորտի՝ զբաղվածությանը:

Ինչպես տեսնում ենք գծապատկերում, 2019 թ. դրությամբ երիտասարդների գործազրկությունը կազմել է 25,7%, իսկ զբաղվածությունը՝ 37,2%:



Գծապատկեր 3. Զբաղվածության և գործազրկության ցուցանիշները (տոկոսներով) 15-29 տարեկան երիտասարդների շրջանում 2019 թ.-ին, ՀՀ վիճակագրական կոմիտե¹⁸

Ըստ ՀՀ-ում իրականացված բազմաթիվ հետազոտությունների՝ զբաղվածության հիմնական մարտահրավերը կրթական համակարգի և աշխատաշուկայի կապի պակասն է^{19 20 21}: Համաձայն ուսումնասիրությունների՝ երիտասարդների զբաղվածության և նրանց մասնագիտական կրթության միջև առկա է ուղիղ կապ, մինչև ժամանակ մասնագիտական կրթության և գործազրկության միջև ևս կա ուղիղ կապ, այսինքն՝ մասնագիտական կրթությունը նպաստում է զբաղվածության ապահովմանը, բայց և չի երաշխավորում այն:

Երիտասարդների շրջանում գործազրկության ցածր մակարդակը խոցելի է դարձնում երիտասարդներին հետևյալ տեսանկյուններից. ֆինանսական անկախության, կենցաղային անկախության և որպես հետևանք նաև մտավոր անկախության տեսանկյունից²²:

¹⁸ Երիտասարդներ, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2020, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2020 թ., էջ 125, https://armstat.am/file/article/trud_2020_9.pdf [15.01.2021]:


¹⁹ Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. Գործառու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, ԵՄԻԿ, ԵՈՒԻ, 2015 թ., <https://escs.am/am/news/4909> [12.12.2020]:

²⁰ ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն, ԵՄԻԿ, ԵՈՒԻ, Երևան, 2013 թ., <https://escs.am/am/news/4908> [12.12.2020]:

²¹ Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018/2019, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019 թ. <https://www.am.undp.org/content/armenia/en/home/library/the-right-to-a-future--youth-that-transforms-armenia.html> [22.02.2021]:

²² Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք, Մ. Գալստյան, Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում, Ուսումնական նյութերի ժողովածու, Երևան, 2018 թ., էջ 111, http://publishing.yasu.am/files/Metsahasakneri_krtutyun.pdf [19.12.2020]:

Երիտասարդների շրջանում բավականին բարձր է աղքատության մակարդակը: Երիտասարդների շրջանում աղքատության պատկերը ներկայացվում է ստորև, ըստ որի՝ ակնհայտ է, որ գրեթե յուրաքանչյուր երրորդ երիտասարդը գտնվում է աղքատության մեջ:



Գծապատկեր 4. Աղքատությունը (տոկոսներով) 15-29 տարեկան երիտասարդների շրջանում 2019 թ.-ին, ՀՀ վիճակագրական կոմիտե²³

Աշխատաշուկայի ուսումնասիրությունների հիման վրա կարող ենք առանձնացնել այն հիմնական խնդիրները, որոնք խոցելի են դարձնում երիտասարդներին աշխատաշուկա մուտք գործելու առումով:

Գեղերային խնդիրներ

Տնտեսական ոչ ակտիվության մակարդակներում գեղերային տարբերություններն առավել ակնհայտ են 25-39 տարեկանների մոտ, երբ կանանց վերարտադրողական ֆունկցիան առավել ակտիվ է²⁴:

Տղամարդիկ ավելի վաղ տարիքում են ավարտում ուսումը, քան կանայք, և սրա կարևոր գործոններից մեկը կարող է լինել պարտադիր զինծառայությունը: Ընդ որում, պարտադիր զինծառայությունից հետո տղաների հիմնական մասը չի շարունակում կրթությունը և մուտք է գործում աշխատաշուկա: Ուշագրավ է, որ այս հանգամանքը կարող է խոցելի դարձնել տղաներին՝ որակյալ կրթություն ստանալու առումով, սակայն նպաստում է միաժամանակ աշխատաշուկա մուտք գործելու համար:

Ուսումն ավարտելուց հետո տղաների մեծ մասն անցնում է աշխատանքի, մինչդեռ աղջիկների մեծ մասը դառնում է տնտեսապես ոչ ակտիվ:

²³ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020, Մաս 1. Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2019 թթ., ՀՀ վիճակագրական կոմիտե, Էջ 35, https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf [12.12.2020]:

²⁴ Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար, Աշխատատեղերի դիմամիկայի վերլուծություն, Համաշխարհային բանկ, 2019 թ., <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/34412/Work-for-a-Better-Future-in-Armenia-An-Analysis-of-Jobs-Dynamics-ARM.pdf> [12.12.2020]:

Միգրացիան ազդեցություն է թողնում կանանց զբաղվածության վրա, հատկապես ժամանակավոր միայնակ կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներում նրանք չեն կարողանում ներգրավվել աշխատաշուկա:

Աշխատանքային զբաղվածություն չունեցողներ, չսովորողներ կամ ուսուցում չանցնողներ

Տևական ժամանակ NEET-ի²⁵ (աշխատանքային զբաղվածություն չունեցողներ, չսովորողներ կամ ուսուցում չանցնողներ) կարգավիճակում գտնված երիտասարդներն այդուհետ նվազ հնարավորություն ունեն կյանքի հետագա տարիներին զբաղված դառնալու²⁶: Ինչպես շատ երկրներում, Հայաստանում ևս NEET-ի խմբում առավելապես կանայք են: Այս խմբի հետ պահանջվում է երկարաժամկետ աշխատանք, որը պետք է ներառի կարողությունների զարգացում, անձնային որակների ձևավորում, շարունակական աջակցություն:

Քաղաքային, գյուղական բնակչություն

Տնտեսական ոչ ակտիվության մակարդակներն ամենացածրն են գյուղական վայրերում (գյուղատնտեսությունը դիտվում է որպես զբաղվածության ոլորտ) և ամենաբարձրը՝ քաղաքային վայրերում, բացառությամբ Երևանի: Երևանից բացի, մյուս քաղաքային բնակավայրերը չեն ապահովում բնակչության լիարժեք զբաղվածություն՝ նախևառաջ աշխատատեղերի սահմանափակությամբ պայմանավորված:

Մասնագիտական կրթություն չունեցողներ

Կրթական մակարդակի աճին զուգահեռ՝ տնտեսական ոչ ակտիվության մակարդակն ընկնում է: Հետաքրքրական է, որ տարիներ շարունակ այս կապը հստակ է, սակայն պետք է նշել, որ գործազուրկների մեջ նաև մեծ է մասնագիտական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը: Հետևաբար, զբաղվածությանն ուղղված պետական քաղաքականության մշակումը պետք է հաշվի առնի այս հանգամանքը՝ կրթության ձեռքբերմանը զուգահեռ՝ հնարավորություն տա երիտասարդների մեջ զարգացնելու անձնային որակներ, որոնք ըստ էության առավել կարևոր գործոն են աշխատանք ձեռք բերելու հարցում²⁷:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Աշխատաշուկայում ներգրավվելու հնարավորությունների տեսանկյունից խոցելի են ՀՈՒԱ: Ըստ հետազոտությունների՝ ՀՈՒԱ շուրջ 92%-ը գործազուրկ է²⁸: Ընդ որում, ՀՈՒԱ խոցելի են նաև կրթություն ստանալու, սոցիալական լիարժեք ներառման հնարավորությունների պակասով կամ բացակայությամբ պայմանավորված: Հաշմանդամություն ունեցող երեխաների 72%-ը չի հաճախում հանրակրթական դպրոց²⁹:

²⁵ Non Education, Employment and Training.

²⁶ Աշխատանք Հայաստանում ավելի լավ ապագայի համար, Աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն, Համաշխարհային բանկ, 2019 թ., <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/34412/Work-for-a-Better-Future-in-Armenia-An-Analysis-of-Jobs-Dynamics-ARM.pdf> [12.12.2020]:

²⁷ Աշխատանքի հնարավորությունների քարտեզագրում. Լոռի, Շիրակ, Սյունիք մարզերում, Հետազոտության հաշվետվություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, ԿՀԽԿ, Երևան, 2019 թ., https://dvv-international.ge/fileadmin/files/caucasus-turkey/Armenia/Resources/Labour-market_mapping_Report.pdf [12.12.2020]:

²⁸ Հաշմանդամությունը Հայաստանում, առցանց հարթակ, <https://www.globaldisabilityrightsnow.org/infographics/disability-armenia> [19.07.2020]:

²⁹ Աշխատանքի հնարավորությունների քարտեզագրում. Լոռի, Շիրակ, Սյունիք մարզերում, Հետազոտության հաշվետվություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, ԿՀԽԿ, Երևան, 2019 թ., https://dvv-international.ge/fileadmin/files/caucasus-turkey/Armenia/Resources/Labour-market_mapping_Report.pdf [12.12.2020]:

Ամփոփելով նշենք, որ վերջին հետազոտությունները մատնանշում են երիտասարդների հետևյալ հիմնախնդիրները՝

- առողջապահական ծառայություններից օգտվելու մշակույթի բացակայություն,
- կրթության և աշխատաշուկայի միջև կապի պակաս^{30 31 32}.

Այժմ անդրադառնանք երիտասարդների վրա COVID-19 ազդեցությանը

Մի շարք հետազոտություններ մատնանշում են այն հիմնական խնդիրները, որոնց հանգեցրել են համավարակը և դրա հետևանքները՝

- ուսուցման դադար կամ մասնակի անցում առցանց ուսուցման,
- աշխատանքի կորուստ, ընդ որում, երիտասարդ աղջիկների շրջանում աշխատանքի կորուստն ունի ավելի բարձր ցուցանիշ՝ երիտասարդ տղաների համեմատ,
- աշխատանքային պայմանների վատթարացում, այդ թվում՝ ծանրաբեռնվածության ավելացում, աշխատանքի թերաժևորում,
- հոգեկան առողջության և բարեկեցության խաթարում՝ անհանգստություն, միայնություն, սթրես և ընկճախտ,
- տեղաշարժման ազատության կորուստ,
- խոցելի խմբերի իրավունքների իրացման անհնարինություն,
- երիտասարդական կազմակերպությունների և երիտասարդական աշխատանքի խաթարում^{33 34}:

Ինչպես արդեն նշեցինք, հետազոտությունն իրականացվել է հետպատերազմյան ժամանակահատվածում

Երիտասարդների վրա պատերազմների, կոնֆլիկտների ազդեցության վերաբերյալ բավականին հարուստ ակադեմիական գրականություն կա, որ ներկայացնում է, թե ինչ բացասական ազդեցություն են թողնում պատերազմները երեխաների ու երիտասարդների վրա, ինչպես նաև վեր են հանում այդ ազդեցությունների չեզոքացմանը կամ մեղմանն ուղղված մասնագիտական մեթոդներ ու մոտեցումներ:

Պատերազմների ազդեցությունը քննարկելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ երիտասարդների մի մասն անմիջական մասնակցություն է ունեցել պատերազմին՝ որպես ժամկետային զինծառայող, պահեստազորային կամ կամավոր, իսկ մյուս մասն անմիջական մասնակցություն է ունեցել թիկունքում տարվող աշխատանքներում: Ակադեմիական գրականությունն անդրադառնում է նաև երեխա զինվորներին (child soldiers³⁵): Չնայած

³⁰ Նույն աղբյուրը:

³¹ Մարդկային զարգացման ազգային զեկույց 2018/2019, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Չայաստան, 2019 թ. <https://www.am.undp.org/content/armenia/en/home/library/the-right-to-a-future--youth-that-transforms-armenia.html> [22.02.2021]:

³² ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարության մոնիթորինգի և գնահատման հաշվետվություն, ԵՄԻԿ, ԵՈՒԻ, 2016 թ., <https://ystudies.am/reports/4419> [12.12.2020]:

³³ Youth and COVID-19: Response, Recovery and Resilience, OECD, 2020, https://read.oecd-ilibrary.org/view/?ref=134_134356-ud5kox3g26&title=Youth-and-COVID-19-Response-Recovery-and-Resilience [20.12.2020]:

³⁴ Youth and COVID-19: Impacts on Jobs, Education, Rights and Mental well-being, International Labour Organization, 2020, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_emp/documents/publication/wcms_753026.pdf [20.12.2020]:

³⁵ Child Soldiers: The Role of Children in Armed Conflict, Ilene Cohn, Guy S. Goodwin-Gill, Institut Henry-Dunant, Clarendon Press, 1994.

Հայաստանում, բարեբախտաբար, երեխաները պատերազմում ներգրավված չեն եղել որպես զինվորներ, թե՛ երեխաները և թե՛ երիտասարդները կրել են պատերազմի անմիջական ազդեցությունը և/կամ եղել են պատերազմի ականատեսը:

Պատերազմների ազդեցությունը երիտասարդների վրա բնութագրվում է հոգեկան առողջության մի շարք խաթարումներով՝

- տրավմա,
- հետտրավմատիկ սթրեսային խանգարում (post-traumatic stress disorder),
- ապագայի հանդեպ վստահության նվազում³⁶:

Արցախյան 44-օրյա պատերազմն անմիջական ազդեցություն է ունեցել Հայաստանում բնակվող երիտասարդների բարեկեցության վրա, ինչը նաև մատնանշվել է հետազոտության մասնակիցների կողմից:

Հետազոտության արդյունքներին մանրամասն կանդիդատանսը հաջորդ բաժիններում:

³⁶ The Role of Youth in Post-Conflict Reconstruction (The Case of Liberia), Marit Woods, SIT Graduate Institute, 2011.

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Հետազոտության խնդիրներից էր վեր հանել Գյումրու երիտասարդներին հատուկ կարիքները և խնդիրները, ինչը թույլ կտա դրանց լուծմանը կամ կարգավորմանն ուղղված երիտասարդական տեղական քաղաքականություն մշակել:

Հետազոտության մասնակիցների կողմից մատնանշված խնդիրներին բնորոշ են ընդհանուր գծեր, միտումներ, որոնք վերաբերում են Գյումրու երիտասարդությանն ամնչվող գրեթե բոլոր ոլորտներին՝ տեղեկատվության ստացմանը, մասնակցությանը, զբաղվածությանը, առողջ ապրելակերպին, վերարտադրողական վարքին, ընտանիքի պլանավորմանը, գենդերային դերերին, քաղաքացիական գիտակցությանը և այլն: Այդ ընդհանրական գծերն են՝

Ա) Գենդերային կարծրատիպերը՝ որպես երիտասարդների առօրյա վարքի կարգավորման մոդելներ

Հետազոտության մասնակիցներն ընդգծում են, որ անկախ ոլորտից՝ զբաղվածություն, կրթություն, մասնակցություն, ընտանիքի պլանավորում, ժամանցի կազմակերպում, Գյումրի քաղաքում կան կարծրատիպեր, որոնք սահմանում են երիտասարդների վարքը կամ գործողությունները: Օրինակ, չնայած գործազրկության բարձր մակարդակին, Գյումրիում ամկա են թափուր աշխատատեղեր, սակայն երիտասարդները նախընտրում են չզբաղվել այդ աշխատանքներով:

«Երբ որ մենք [սկստի ունի ՀԿ] տալիս ենք մենեջերյալ աշխատանքի հայտարարություններ, ավելի շատ տղաներն են դիմում, բայց այդ նույն հմտություններով նրանք շատ լավ ասիստենտի աշխատանք կարող էին կատարել, տղաները գրեթե երբեք չեն դիմում ասիստենտի աշխատանքի համար [օրինակը փորձից էլնելով]: Տղաներն ավելի շատ ձգտում են պետական աշխատանքի, օրինակ՝ մտնեն քաղաքապետարանում աշխատեն: Պետական աշխատանքը ավելի հարգի է, իսկ Գյումրիում դա ընդունված է՝ ավելի հարգի աշխատանքի գնալ»:

Հիմնական տեղեկատուների հետ հարցազրույցից

«Թող կինը ռիսկ անի, իր ամուսնուն ասի՝ արի գնանք, դու էլ ստուգվի [խոսքը ընտանիքի պլանավորման շրջանակներում ախտորոշմանն է վերաբերում]»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Բ) Բևեռացվածությունը՝ որպես համայնքը բնութագրող գործոն

Գյումրու երիտասարդներին բնորոշ է բևեռացվածությունը. կան շատ ակտիվ, անկախ երիտասարդներ, միևնույն ժամանակ կան նաև երիտասարդներ, որոնք գործազուրկ են, աշխատանք չեն փնտրում, ներգրավված չեն որևէ գործընթացում:

«Շատ քիչ մասն է, որ ազատ է մտածում, կամ անում է այն, ինչ ուզում է, մնացածը հոսանքի ուղղությամբ են գնում, վազում են նյութականի հետևից, մեծ երազանքներ չեն դնում իրենց առաջ»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Գ) Համայնքային ընդգծված ինքնության շեշտադրումը, համայնքային համերաշխությունը/հարմարվողականությունը


«Եթե երիտասարդին հարցնենք, թե ինչ կարծիք ունի ինչ-որ երևույթի մասին, կպատասխանի ըստ հասարակությունում ընդունված մոտեցման, ոչ թե ըստ իր պատկերացման, որ խուսափի գլխացավանքներից»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Երիտասարդների շրջանում դրսևորվում է համայնքին հարմարվելու, բոլորին դեմ չգնալու մոտեցումը՝ որպես սեփական կյանքի ձևավորման հիմք: Հիշյալ գործոնն, իհարկե, ունի լուրջ հիմքեր, որոնց խորքային ուսումնասիրությունն այս հետազոտության խնդիրներից դուրս է, սակայն դրանց անդրադառնալը ևս կարևոր ենք համարում:


Համայնքային ինքնությունը և հարմարվողականությունը հաճախ ձևավորվում են որոշակի ճգնաժամային իրավիճակների հաղթահարմամբ, երբ համայնքին պատկանելությունը նպաստում է խնդիրների հաղթահարմանը՝ դրանով ամրապնդելով համայնքային ինքնությունը (Durkheim E. Parsons T.): Գյումրին՝ որպես համայնք, ևս կրում է այս ֆենոմենի ազդեցությունը՝ 1988 թ. երկրաշարժ, 1990-ական թվականների սկզբներին Արցախյան պատերազմ և սոցիալական վատ պայմաններ. այս ամենն իր ազդեցությունն է թողել Գյումրու՝ որպես համայնքի, ինքնության ձևավորման վրա: Հետևաբար, երիտասարդների շրջանում ևս հստակ նկատելի է համայնքային «համերաշխությունը» չխաթարելու ձգտումը:

Ըստ հետազոտությանը մասնակցած երիտասարդների՝ Գյումրու երիտասարդների հիմնական խնդիրները հետևյալն են՝



Գծապատկեր 5. Ձեր կարծիքով, ո՞րն է երիտասարդության ամենակարևոր խնդիրը Գյումրի քաղաքում (միևնչև 5 պատասխան). Պատասխանների նշվածությունը՝ նվազման կարգով (N=370, %)

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, երիտասարդների կողմից նշված հիմնական 5 խնդիրները վերաբերում են գործազրկությանը, կրթությանը, արտագաղթին, ֆինանսական դրությանը և ազատ ժամանակի տնօրինմանը: Երիտասարդների ֆինանսական ոչ ցանկալի վիճակի մասին են վկայում նաև հետազոտության մյուս տվյալները: Այսպես, ազատ ժամանակի տնօրինման խնդիրը, ժամանցի հնարավորությունների պակասը երիտասարդները բացատրում են նաև ֆինանսական դրությամբ:



Գծապատկեր 6. Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ ունենալու պարագայում ինչպե՞ս կտնօրինեք Ձեր ազատ ժամանակը: Հնարավոր է մի քանի պատասխան (N=370, %)

Ինչպես փաստում են երիտասարդական ուսումնասիրությունները՝ դեռահասների և պատանիների ազատ ժամանակի տնօրինումը, ժամանցի կազմակերպումը նշանակալի դեր են կատարում նրանց կյանքի հետագա փուլերի անցման, սոցիալական ինքնության ձևավորման և երիտասարդական մշակույթների վրա³⁷: Երիտասարդների ազատ ժամանակի կազմակերպումը նպաստում է տարբեր ենթամշակույթների ձևավորմանը, ինչպես նաև նրանց կոգնիտիվ զարգացմանը³⁸:

Ուշագրավ է, որ ֆինանսական դրության մասին նշելիս երիտասարդներն ընդգծում են այն անազատությունները, որոնց բախվում են տարբեր ոլորտներում:

Այժմ խմբավորենք երիտասարդների անազատություններին վերաբերող մյուս խնդիրները, որոնք վեր են հանվել ըստ հետազոտության արդյունքների:

Դ) Ենթակառուցվածքների պակաս կամ բացակայություն, ինչպես նաև անհասանելիություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար

Հետազոտության մասնակիցները մատնանշում են ենթակառուցվածքներին առնչվող հետևյալ խնդիրները՝

- տրանսպորտի ոչ բավարար վիճակ, այդ թվում՝ հեծանվային ուղիների բացակայություն,

³⁷ Growing Up and Going Out: Adolescents and Leisure, Leo B. Hendry, Aberdeen University Press, 1983.
³⁸ Street Corner Society: The Social Structure of an Italian Slum, William Foote Whyte, 4th edn. Chicago: University of Chicago Press, 1993.

- կրթական ծառայությունների որակի ցածր մակարդակ, այլընտրանքների բացակայություն կամ պակաս, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների, բազմազանության պակաս,
- առողջապահական ծառայությունների որակի ցածր մակարդակ,
- մշակութային, ժամանցային ծառայությունների բազմազանության պակաս,
- երիտասարդների և երիտասարդ ընտանիքների համար բնակարանային ֆոնդի պակաս:

«Եթե միջոցառումը քաղաքից դուրս է, ուրեմն չես կարող մասնակցել, քանի որ ընտանիքի անդամներից մեկը դեմ կլինի, կամ եթե [Երեկոյան] 7-ից հետո է միջոցառումը, տրանսպորտի պատճառով չես կարող մասնակցել»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Վերոնշյալ մեջբերումն անդրադառնում է մի շարք խնդիրների՝ կարծրատիպեր, երիտասարդների բնակարանային պայմաններ, տրանսպորտային խնդիր, մտավոր անկախություն: Հայաստանում երիտասարդների ճնշող մեծամասնությունն ապրում է իր ծնողների հետ, ինչն իհարկե սոցիալ-տնտեսական պայմանավորվածություն ունի: Ընդ որում, այս երևույթը տարածված է շատ երկրներում՝ մի շարք եվրոպական երկրներում երիտասարդների 50%-ն ապրում է ծնողների հետ մինչ 26-27 տարեկանը³⁹:

Հարցման մասնակիցների 80%-ն ապրում է ծնողների հետ: Իհարկե, այստեղ կա նաև գենդերային հայեցակետ՝ հարցման մասնակիցների մեծ մասը աղջիկ է, իսկ հետազոտությունը ցույց տվեց, որ *«Գյուճարիում աղջիկը կարող է դուրս գալ ծնողների տանից միայն ամուսնանալու դեպքում»:*

Ապրելով ծնողների հետ, հիմնական ֆինանսական կախվածությամբ պայմանավորված և իհարկե հաշվի առնելով մշակութային հայեցակետը, սովորությունները՝ Գյուճարու երիտասարդներն անկախության, ինքնուրույնության են ձգտում:

Այս հանգամանքը նաև ազդում է երիտասարդների միգրացիոն տրամադրությունների վրա՝

«Երիտասարդները կտրված են աշխարհից, դրա համար են ցանկանում լքել քաղաքը, գնալ այնտեղ, որտեղ լայն հնարավորություններ կան»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Ե) Զբաղվածության ցածր մակարդակ, աշխատատեղերի սահմանափակություն


Ինչպես ողջ Հայաստանում, Գյուճարիում ևս երիտասարդների շրջանում բարձր է գործազրկության մակարդակը: Գյուճարիում առավել ընդգծված է այս խնդիրը, քանի որ աշխատատեղերը բավականին սահմանափակ են:

³⁹ Leaving Home in the European Union, Maria Iacovou, Working papers of the Institute for Social and Economic Research, paper 2001-18. Colchester: University of Essex, 2001.

Հետազոտությանը մասնակցած երիտասարդների մեծ մասը (58%) հետազոտությանը նախորդած 2 շաբաթների ընթացքում չի ունեցել վարձատրվող աշխատանք: Հետաքրքրական է, որ 2015 թ. հետազոտության համաձայն՝ հարցման մասնակցած երիտասարդների գրեթե նույն մասը ևս գործազուրկ էր՝ 60%⁴⁰:

Երիտասարդական ուսումնասիրությունների շրջանակում երիտասարդների զբաղվածության հարցերը քննարկվում են՝ ուշադրություն դարձնելով ոչ միայն զբաղվածության, այլև ֆորմալ զբաղվածության փաստին⁴¹:

Հարցման մասնակից աշխատանք ունեցող երիտասարդների մեծ մասն ունեցել է մշտական գրանցված աշխատանք:



Գծապատկեր 7. Աշխատանքի տեսակը (N=151, %)

Ինչպես տեսնում ենք, երիտասարդները ներգրավված են նաև չգրանցված զբաղվածության ոլորտ: Ընդ որում, հետազոտության մասնակիցները փաստեցին, որ աշխատավայրում հաճախ են ոտնահարվում երիտասարդների աշխատանքային իրավունքները՝ հատկապես պարտականությունների, աշխատանքային ծանրաբեռնվածության հստակեցման բացակայության առումով: Այս երևույթն ունի մի քանի պատճառ. աշխատատեղերի սակավությունը հանգեցնում է նրան, որ գործատուն կարողանում է «ստիպել» երիտասարդին ենթարկվել իր կանոններին, հաճախ ոչ նորմավորված կանոններին, քանի որ եթե «դու չհամաձայնես, մյուսը կհամաձայնի» (չակերտներում ներկայացված են հետազոտությանը մասնակցած երիտասարդների ձևակերպումները), բացի սրանից շատ երիտասարդներ չգիտեն իրենց աշխատանքային իրավունքները և ունեն իրավագիտակցության ցածր մակարդակ:

Չբաղվածությանն առնչվող մյուս խնդիրները հետևյալն են՝

- մասնագիտական կողմնորոշման կարիք, մասնագիտության ընտրության հարցում ուղղորդման կարիք,
- կրթության, պրակտիկ գիտելիքի պակաս,
- մրցունակությանը նպաստող հմտությունների պակաս՝ լեզուների իմացության պակաս, թվային գրագիտության պակաս,
- Գյումրի քաղաքում առկա բոլոր հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության պակաս:


⁴⁰ Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, Գյումրու ԵՆԿ ՀԿ, ԳԵԽ, Գյումրի, 2015 թ. Էջ 72, <https://gyumriypd.files.wordpress.com/2015/05/gyumri-youth-situation-analysis-hy.pdf> [12.12.2020]:

⁴¹ Key concepts in youth studies, Mark Cieslik, Donald Simpson, Sage publications, 2013, p. 148:

2) Քաղաքական, քաղաքացիական ակտիվության, մասնակցության պակաս

Երիտասարդական ուսումնասիրությունները հիմնականում կենտրոնանում են երիտասարդների քաղաքական մասնակցության 3 ձևերի վրա՝

- ինստիտուցիոնալ ներգրավվածություն (ընտրություններ, քարոզարշավներ, անդամակցություն կուսակցություններին),
- ցույցերին մասնակցություն (սոցիալական շարժումներ, բողոքի ակցիաներ),
- քաղաքացիական մասնակցություն (համայնքային ներգրավվածություն, կամավորական աշխատանք)⁴²:



Գծապատկեր 8. Երիտասարդների քաղաքական, քաղաքացիական մասնակցությունը (N=370, %)

⁴² Youth Political Participation: Literature review, Youth Partnership, Galstyan, M., 2019, https://pjp-eu.coe.int/documents/42128013/47262631/Youth-Political-participation_Lit+review_BRIEF_FINAL.pdf [12.12.2020]:

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, երիտասարդների մեծ մասը մասնակցել է նախորդ ընտրություններին: Երիտասարդների ճնշող մեծամասնությունն ակտիվորեն ներգրավված չի եղել քաղաքական կյանքում. կուսակցության անդամ չէ (83%), քաղաքական արշավների չի մասնակցել վերջին մեկ տարվա ընթացքում (85%):


Չեռաքրքրական է ներկայացնել այս հետազոտության և Գյումրու երիտասարդության իրավիճակի նախորդ վերլուծության⁴³ (2015 թ.) համեմատականը. այսպես՝

Տարի/Ցուցանիշ	2015 (%)	2020 (%)
Անդամակցություն քաղաքական կուսակցությանը	13	8
Չեռաքրքրվածություն քաղաքական իրադարձություններով	66	78
Մասնակցել են նախորդ ընտրություններին	63	63
Չեռաքրքրվածություն Գյումրի քաղաքը խորհրդարանում ներկայացնող քաղաքական գործչի աշխատանքով	46	60

Աղյուսակ 1. 2015 և 2020 թթ. հետազոտությունների համեմատություն

Մասնակցության համար խոչընդոտ են նաև որոշակի կարծրատիպերը, որոնք խանգարում են, օրինակ, կամավորություն անել, անդամակցել կազմակերպություններին:

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, հարցման մասնակիցների միայն 15%-ն է որևէ կազմակերպության՝ հասարակական, քաղաքական, կրոնական և այլն, անդամ:




Գծապատկեր 9. Արդյոք որևէ կազմակերպության անդամ եք (հասարակական, քաղաքական, կրոնական և այլն) (N=370, %)

⁴³ Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, Գյումրու ԵՆԿ ՀԿ, ԳԵԽ, Գյումրի, 2015 թ., <https://gyumriypd.files.wordpress.com/2015/05/gyumri-youth-situation-analysis-hy.pdf> [12.12.2020]:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ շատ երիտասարդներ իրենց քաղաքական մասնակցությունն սկսում են տեղական մակարդակից, որտեղ երիտասարդները հնարավորություն ունեն տեսնելու իրենց մասնակցության ուղիղ ազդեցությունը⁴⁴:

Հարցման մասնակից երիտասարդների մեծ մասը կարծում է, թե չի կարող ազդեցություն ունենալ Գյումրի քաղաքի մակարդակով որոշումների կայացման վրա՝ շուրջ 66%: Հետաքրքրական է, որ 22%-ը նշել է, որ աննպատակ է համարում նման ազդեցությունը: Ինչպես տեսնում ենք գծապատկերից, որոշումների կայացման վրա իրենց ազդեցության գնահատականները Գյումրի քաղաքի և երկրի մակարդակով, ըստ երիտասարդների գնահատականների, բավականին համանման են:



Գծապատկեր 10. Կարծում եք, թե կարող եք Գյումրի քաղաքի և երկրի մակարդակով ազդեցություն ունենալ որոշում կայացնողների վրա (N=370, %, նշել մի քանի պատասխան)


Կրկին, համեմատելով 2015 թ. հետազոտության արդյունքների հետ, տեսնում ենք, որ ցուցանիշները հետաքրքիր կերպով փոխվել են, այսպես՝ եթե 2015 թ. քաղաքի մակարդակով որոշումների կայացման վրա երիտասարդների 27%-ն է նշել, որ չի կարող ազդեցություն ունենալ, բայց կցանկանար, ապա 2020 թ. այդ թիվը 42% է: Հետևաբար,

⁴⁴ Youth Political Participation: Literature review, Youth Partnership, Galstyan, M., 2019, https://pjp-eu.coe.int/documents/42128013/47262631/Youth-Political-participation_Lit+review_BRIEF_FINAL.pdf [12.12.2020]:

սեփական ուժերի հանդեպ վստահությունն, ըստ եռլայան, նվազել է 5 տարիների ընթացքում:

Հետազոտության մասնակիցները նշում են, որ Գյումրու երիտասարդները բավականին պասիվ են քաղաքականորեն, քանի որ ունեն գիտելիքի պակաս քաղաքական համակարգի, քաղաքականության, դրանցում երիտասարդների դերի վերաբերյալ: Հաջորդ պատճառը երիտասարդների անվստահությունն է քաղաքական կառույցների հանդեպ: Անվստահությունը քաղաքական համակարգի, ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ ևս տարածված է և հաճախ է հանդիպում մի շարք երկրներում⁴⁵:

Վերջին վեց ամիսների ընթացքում ցածր է եղել նաև երիտասարդների քաղաքացիական մասնակցությունը: Սակայն պետք է հաշվի առնել, որ երկրում տիրում էր արտակարգ դրություն՝ համավարակով պայմանավորված:



Գծապատկեր 11. Վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ եք... (N=370, %)

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, երիտասարդների մեծ մասը գրեթե որևէ քաղաքացիական մասնակցություն չի ունեցել, բացառություն է կազմում բարեգործական միջոցառումներին մասնակցությունը:

⁴⁵ Նույն աղբյուրը:

Է) Կյանքի հմտությունների պակաս

Չետագոտության մասնակիցներն ընդգծել են այն հիմնական հմտությունները, որոնք Գյումրու երիտասարդներին պակաս մրցակցային և ինքնուրույն են դարձնում՝

- մեդիագրագիտության պակաս,
- տեղեկատվության մշակման, տեսակավորման հմտության պակաս,
- քննադատական, ստեղծագործական մտածողության պակաս,
- ժամանակի կառավարման հմտության պակաս,
- պատասխանատվությունից խուսափում,
- մտավոր անկախության ցածր մակարդակ:

«Ծնողն է վճարում ուսման վարձը, ապրում են ծնողների պատկերացրածով, ինչը հանգեցնում է ինքնուրույնության պակասի»:

ՉԿ-ների ներկայացուցիչների հետ խմբային քննարկումից


Նույնն էլ վերաբերում է քաղաքական մասնակցությանը:

«Եթե ծնողն ինչ-որ կուսակցության է հարում, երիտասարդն ընտրություն չի ունենում, ազատություն չի ունենում»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Ըստ հետազոտության մասնակիցների՝ Գյումրու երիտասարդներն առհասարակ ուղղորդման կարիք ունեն՝ զբաղվածության, մասնակցության, ազատ ժամանակի տնօրինման առումով:

Չետագոտությանը մասնակցած երիտասարդները տարբեր դասընթացների են մասնակցել՝ որոշակի հմտությունների պակասը լրացնելու համար:



Գծապատկեր 12. Վերջին մեկ տարվա ընթացքում արդյոք մասնակցե՞լ եք որևէ դասընթացի (N=370, %)

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, երիտասարդների մեծ մասը վերջին մեկ տարվա ընթացքում մասնակցել է որևէ դասընթացի, ընդ որում, այդ դասընթացները հետևյալ ուղղություններով են եղել՝


- Բիզնես հմտություններ, բիզնես ծրագիր,
- Առաջին օգնություն,
- Ծրագրավորում,

- Չբուսաշրջություն,
- Օտար լեզուներ,
- Մասնագիտական կողմնորոշում կամ աշխատաշուկային առնչվող,
- Ծրագրի կառավարում,
- Մեդիագրագիտություն,
- Մարտական պատրաստություն, մարտավարություն,
- Հաշվապահություն, ֆինանսների կառավարում,
- Մարքեթինգ,
- Գրաֆիկական դիզայն, վեբ-ծրագրավորում,
- Համակարգչային գրագիտություն,
- Հոգեբանություն,
- Կոնկրետ մասնագիտություն,
- SMM,
- Վիքիպեդիայի խմբագրում,
- Հագուստի մոդելավորում, դիմահարդարում:

Ը) Առողջ ապրելակերպի հնարավորությունների և մշակույթի բացակայություն կամ պակաս, հոգեկան առողջության խաթարումներ

Դեռահասների և երիտասարդների նյութական անապահովվածությունը, թերսնումը, առողջապահական ծառայությունների անհասանելիությունը այն տարածված խնդիրներն են, որոնք քննարկվում են երիտասարդների առողջության, բարեկեցության վերաբերյալ երիտասարդական ուսումնասիրություններում⁴⁶:


Ինչպես նշվեց, երիտասարդների շրջանում բավականին բարձր է աղքատության մակարդակը՝ շուրջ 26%: Գյուլմրու երիտասարդները ևս նշել են ֆինանսական ոչ բավարար դրության, ֆինանսական անկախության ցածր մակարդակի մասին:



Գծապատկեր 13. Հարցմանը մասնակցած երիտասարդների եկամտի չափը (ՀՀ դրամ) (N=370, %)


⁴⁶ Key concepts in youth studies, Mark Cieslik, Donald Simpson, Sage publications, 2013, p. 86.

Ֆինանսական դրության ոչ բավարար լինելու մասին են վկայում նաև մյուս հարցերի պատասխանները՝



Գծապատկեր 14. Ի՞նչ կցանկանայիք փոխել ձեր կյանքում (N=370, %, մի քանի ընտրություն)

Ուշագրավ է, որ չնայած ֆինանսական դրության փոփոխության ցանկությանը, Գյուլմրու երիտասարդներն, ըստ հարցման մեկ այլ արդյունքների, իրենց համարում են անկախ և ինքնուրույն, այդ թվում՝ ֆինանսապես անկախ: Նրանց շուրջ 60%-ը նշել է, որ կարող է հոգալ սեփական ծախսերը:



Գծապատկեր 15. Գյուլմրու երիտասարդների անկախությունը և ինքնուրույնությունը (N=370, %)

Առողջապահական ծառայություններից օգտվելու մյուս խնդիրը մշակույթի բացակայությունն է: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, առհասարակ Հայաստանում բացակայում է առողջ ապրելակերպի, կանխարգելիչ բժշկական ծառայություններից օգտվելու մշակույթը, Գյումրին ևս բացառություն չէ: Հետազոտության մասնակիցները ևս ընդգծել են, որ Գյումրու երիտասարդները առողջապահական կանխարգելիչ միջոցառումների հաճախելու մշակույթ չունեն: Հետազոտության մասնակիցները մատնանշել են, որ հատկապես սեռական դաստիարակության կարիքը բավարարելու համար երիտասարդները փորձում են օգտվել իրենց հասանելի աղբյուրներից, այդ թվում՝ համացանցից: Բայց դրանք հիմնականում ոչ կառավարելի ու ոչ ճշգրիտ աղբյուրներ են:

Գյումրու երիտասարդների առողջությանն առնչվող հաջորդ խնդիրը վնասակար հակումներն են (ալկոհոլի, ծխախոտի, թմրանյութերի օգտագործում / կախվածություն): Սա նշել է երիտասարդների 18%-ը, իսկ 21%-ը նշել է նաև սպորտով զբաղվելու հնարավորությունների պակասը (տես՝ Գծապատկեր 5):

Թ) Հոգևոր հարցերի վերաբերյալ մտածելու, քննարկելու հարթակների պակաս

Երիտասարդական ուսումնասիրություններում հիմնականում նշվում է, որ կրոնը չի ազդում երիտասարդների կյանքի վրա, չնայած այն արժեքների, կյանքի նպատակների, պատկանելության աղբյուր է⁴⁷:

Հետազոտության մասնակիցները նշում են, որ Գյումրու երիտասարդները հոգևոր բնույթի հարցեր քննարկելու հնարավորություն չունեն, որը պայմանավորված է ինչպես այդ հարցերի շուրջ ուղղակի չմտածելու հանգամանքով, այնպես էլ հոգևոր առաջնորդների նկատմամբ վստահության պակասով, ծնողների և երեխաների միջև հարաբերությունների բնույթով: Ուշագրավ է, որ այս խնդիրը մատնանշվել էր նաև Գյումրու երիտասարդության իրավիճակի նախորդ վերլուծության շրջանակներում⁴⁸:

Ըստ կարծիքների՝ Գյումրու երիտասարդների նպատակադրումները հիմնականում նյութականին են առնչվում:

«Երիտասարդներն ուզում են քիչ անելով շատի հասնել»:

««Մեծ ծուկ» չորսալու մտածելակերպը կա Գյումրիում... մեծ ցանկությունների բացակայությունը, հացը լինի, էդ է... »:

«Երազանքները նյութական են, երազում են այն, ինչ իրենց տրվում է: Քանի որ, ըստ երիտասարդների, հասարակության մեջ էլ ընդունված է, որ փողն է կարևոր, ստատուսն է կարևոր»:

«Անում են մի բան, կարողանում են անել մի այլ բան, բայց երազում են անել մեկ ուրիշ բան: Իրենց երազանքները, իրենց կարողությունները և աշխատանքը չեն համընկնում»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

⁴⁷ Key concepts in youth studies, Mark Cieslik, Donald Simpson, Sage publications, 2013, p. 117.

⁴⁸ Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, Գյումրու ԵՆԿ ՀԿ, ԳԵԽ, Գյումրի, 2015 թ., <https://gyumriypd.files.wordpress.com/2015/05/gyumri-youth-situation-analysis-hy.pdf> [12.12.2020]:

Ընդ որում, երիտասարդները սշում են, որ իրենց երազանքների կյուբական լինելը երբեմն հետևանք է որոշ վախերի՝ վախ շրջապատից տարբերվող երևալու, ընդունված նորմերին ընդդիմանալու և այլն:

«Վերածնվող Գյուճի» կտավը

Գյուճիում օրվա միջոցառումների շրջանակներում բնակիչները հնարավորություն են ունեցել իրենց հետքը թողնելու կտավի վրա, որը վերնագրված է եղել «Վերածնվող Գյուճի», ընդ որում, կտավի վրա նախապես նկարված է եղել Գյուճիում Սուրբ Յոթ Վերք եկեղեցին:



Ներդիր 1. «Վերածնվող Գյուճի» կտավը

Երիտասարդների համար պետք է առավել հաճախ ստեղծել առիթներ արտահայտելու, քննարկելու հոգևոր, մշակութային հարցեր ու խնդիրներ:

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ինչպես արդեն նշեցինք, հետազոտությունն իրականացվել է բավականին բարդ և ճգնաժամային ժամանակահատվածում՝ համավարակ, պատերազմ, դրանց հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական ճգնաժամեր:


Ըստ անձի զարգացման մի շարք տեսությունների՝ մարդն իր ողջ կյանքի ընթացքում ապրում է՝ հաղթահարում է կամ ոչ, մի շարք սոցիալ-հոգեբանական ճգնաժամեր⁴⁹:

Չետազոտության մասնակիցները նշում են, որ ճգնաժամային իրավիճակները բացասական ազդեցություն են թողել երիտասարդների հոգեկան առողջության վրա:

«Համավարակի ժամանակ ամեն ինչ շատ ճնշող էր, նեղ էր, կարիք կա վերադառնալու նորմալ շփմանը»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, երիտասարդները նշել են, որ համավարակի առաջ բերած հիմնական խնդիրներն են՝ գործազրկությունը, անորոշությունը վաղվա օրվա հանդեպ, երկիրը լքելու ցանկությունը և անվստահությունը կառավարության նկատմամբ:



Գծապատկեր 16. Ըստ Ձեզ՝ որո՞նք են համավարակի հետևանքով առաջացած հիմնական խնդիրները, որոնց այսօր հանդիպում են երիտասարդները (N=370, %, մի քանի տարբերակ)


⁴⁹ Идентичность: юность и кризис, Эриксон Э., Пер. с англ., Общ. ред. и предисл. Толстых А.В., Издательская группа "Прогресс", Москва, 1996.

Համավարակի ընթացքում անցում կատարվեց հեռավար կրթության, ինչն էլ, ըստ հետազոտության մասնակիցների, խոչընդոտեց որակյալ կրթություն ստանալուն, քանի որ հեռավար կրթության ժամանակ նրանք հիմնականում ստացել են տեղեկություններ, ոչ գործնական գիտելիք:

Այնուամենայնիվ, համավարակը նաև նպաստել է առցանց հաղորդակցության զարգացմանը: Մյուս կողմից, այն նաև մարտահրավեր է, քանի որ համավարակից հետո երիտասարդները միգրացե չկարողանան կամ պատրաստ չլինեն «անցնելու օնլայնից իրական կյանք» (ձևակերպումը խմբային քննարկման մասնակից երիտասարդի):

Համավարակից հետո երիտասարդները սպասում են վերադառնալ բնականոն ակտիվ կյանքին:


Հետազոտությունը թույլ տվեց նաև բացահայտել, թե ինչպես է համավարակը ազդել նրանց կյանքի վրա: Հարցմանը մասնակից երիտասարդների մեծ մասը նշել է, որ ունեցել է ֆինանսական կորուստներ, ինչպես նաև կորցրել է վստահությունը վաղվա օրվա հանդեպ:



Գծապատկեր 17. *Ինչպե՞ս է ազդել համավարակը Ձեր կյանքի վրա (N=370, %, մի քանի տարբերակ)*


2020 թ.-ին ողջ երկիրը, այդ թվում՝ երիտասարդները կանգնեցին նաև մեկ այլ ճգնաժամային իրավիճակի առջև: Խոսքը 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան 44-օրյա պատերազմի մասին է:

Ինչպես տեսնում ենք գծապատկերից, պատերազմի առաջ բերած հիմնական խնդիրները, ըստ առցանց հարցման մասնակիցների, վաղվա օրվա հանդեպ անորոշությունն է, երկիրը լքելու ցանկությունը և գործազրկությունը:




Գծապատկեր 18. Ըստ Ձեզ՝ որո՞նք են 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով առաջացած հիմնախնդիրները, որոնց այսօր հանդիպում են երիտասարդները (N=370, %, մի քանի տարբերակ)

Ուշագրավ է, որ պատերազմի ազդեցությունն անհատական մակարդակում ևս համադրելի է այս ցուցանիշներին:



Գծապատկեր 19. Ինչպե՞ս է ազդել 2020 թ. 44-օրյա պատերազմը Ձեր կյանքի վրա (N=370, %, մի քանի տարբերակ)

Ուշագրավ է, որ չնայած այն հանգամանքին, որ երիտասարդների մեծ մասը (69%) նշել է, որ կորցրել է վստահությունը վաղվա օրվա հանդեպ, այնուամենայնիվ ճնշող մեծամասնությունը (80%) նշել է, որ երիտասարդները կարող են ազդեցություն ունենալ պատերազմի հետևանքների հաղթահարման վրա:



Գծապատկեր 20. Ըստ Ձեզ՝ կարո՞ղ է արդյոք երիտասարդությունն ազդեցություն ունենալ պատերազմի հետևանքների հաղթահարման և երկրում քաղաքական իրավիճակի կայունացման վրա (N=370, %)

Հարցման մասնակիցները պատերազմի հետևանքների հաղթահարման գործում երիտասարդների մասնակցությունը տեսնում են հետևյալ կերպ՝


- աշխատանքի միջոցով, իր ոլորտում լավ մասնագետ լինելով, նպաստելով երկրի կայացմանը,
- կրթություն ստանալով,
- ակտիվ ներգրավվելով երկրի ներքաղաքական կյանք,
- մեկ գաղափարի շուրջ համախմբվելով, պետականամետ մտածողության շնորհիվ,
- սեփական դիրքորոշումն արտահայտելով, պաշտպանելով,
- ծագող խնդիրներին նորարարական լուծումներ տալով, առաջատար տեխնոլոգիաների ճյուղերը զարգացնելով,
- քաղաքացիական հասարակություն ստեղծելով⁵⁰:

Պատերազմի հետևանքների հաղթահարման և երկրում քաղաքական կայունացման մեջ երիտասարդները տեսնում են նաև իրենց մասնակցությունը: Որպես մասնակցության հիմնական ձևեր՝ երիտասարդները նշել են՝

- որակյալ աշխատանքը,
- օրինակելի քաղաքացի լինելը,
- կամավորական մասնակցությունը երկրի խնդիրների լուծմանը և այլն:

⁵⁰ Նշված են առավել հաճախ հանդիպող պատասխանները՝ նվազման կարգով:

Գծապատկերում տեսնում ենք, թե ինչպես են հարցման մասնակից երիտասարդները մասնակցել 2020 թ. Արցախյան պատերազմին:



Գծապատկեր 21. Երիտասարդների մասնակցությունը 2020 թ. Արցախյան պատերազմին (N=370, %, մի քանի պատասխան)

Ըստ հետազոտության մասնակիցների՝ երիտասարդների հոգեկան ու ֆիզիկական առողջության վրա պատերազմի բացասական ազդեցությունն զգացվում է հիմա և դեռ երկար կզգացվի.

«Պատերազմից հետո մեր բոլոր կամավորներն սկսեցին հիվանդանալ միանգամից: Ամեն մեկը մի առողջական խնդիր ունեցավ»:

Հիմնական տեղեկատուի հետ հարցազրույցից

«Պետք է գնահատել մարդուն, հարգել դիմացինին, կրթվել»:

«Պետք է կարևորել ազգայինը, հիշել անցյալը, ազգային գաղափարախոսությունն մշակել, հավաքվել այդ գաղափարի շուրջ, այլ ոչ մարդկանց շուրջ»:

«Առաջին օրերին սպասում էինք, որ առաջիկա օրերին կավարտվի պատերազմը, հետո սկսեցինք քիչ-քիչ հիասթափվել»:


«Տանը տխուր էր, քանի որ եղբայրս ծառայում էր այդ օրերին, և մենք նրանից լուր չունեինք, դրա համար չէի ուզում տուն գնալ, կամավորությամբ էի զբաղվում, գնում մարտական պատրաստության դասերի, հետո ստացա՞ս մայրիկիս էի պատմում, մայրիկս էլ՝ հայրիկիս»:

«Հայաստանը ոտքի կկանգնի, սա էլ կանցնի»:

«Առաջիկա 30 տարին Հայաստանը ուշքի չի գա»:

Երիտասարդների հետ խմբային քննարկումից

Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, չնայած ճգնաժամային դրությանը, երիտասարդների մեծ մասը (47%) ցանկանում է շարունակել ապրել բնականոն կյանքով:



Գծապատկեր 22. Ինչպիսի՞ն են առաջիկայում Ձեր պլանները (N=370, %)

Գյումրի քաղաքի երիտասարդական տեղական քաղաքականության մշակման շրջանակներում կարևոր էր անդրադառնալ երիտասարդների կարիքներին ու խնդիրներին, միևնույն ժամանակ նույնքան կարևոր է նաև ծանոթանալ և վերլուծել երիտասարդների ներուժն ու հնարավորությունները, որոնց իրացմանը կարող է աջակցել այդ քաղաքականությունը:

ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Չեկույցի նպատակներից է նաև վեր հանել այն ներուժը, որն ունի Գյումրին և Գյումրու երիտասարդությունը՝ ուղղված երիտասարդների կարիքների բավարարմանը:

Գյումրու մարդկային ներուժը

2020 թ. տարեսկզբին Շիրակի մարզի մշտական բնակչությունը կազմել է շուրջ 231 400 մարդ⁵¹, որից շուրջ 47 600-ը 15-29 տարեկան երիտասարդներն են (մարզաբնակների շուրջ 20,6%-ը)⁵²:

2020 թ. տարեսկզբին Գյումրի քաղաքի մշտական բնակչությունը կազմել է շուրջ **112 400 մարդ**⁵³, որից 15-29 տարեկան երիտասարդների թիվը շուրջ **23 000** է (քաղաքի բնակչության 20%-ը):

Այստեղ կարևոր է արձանագրել մտահոգիչ այն փաստը, որ Գյումրու (ինչպես և՛ ԶԶ-ի) մշտական բնակչությունը տարիների ընթացքում նվազում է, և այդ միտումը դեռ շարունակական է⁵⁴:



Գծապատկեր 23. Գյումրի քաղաքի մշտական բնակչության դինամիկան, ԶԶ վիճակագրական կոմիտե, 2020 թ.⁵⁵

⁵¹ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2020, Մաս 2. Բնակչություն, ԶԶ վիճակագրական կոմիտե, էջ 40, https://armstat.am/file/article/demog_2020_2.pdf [22.12.2020]:

⁵² Նույն աղբյուրը, էջ 55:

⁵³ Նույն աղբյուրը, էջ 44:

⁵⁴ Նույն աղբյուրը, էջ 44:

⁵⁵ Գծապատկեր 23-ի 2011 թ. սյունակում համապետական մարդահամարի տվյալներ են:

Ֆինանսական ռեսուրսներ

Գյումրի քաղաքի՝ համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպման նպատակով 2020 թ. համար համայնքային բյուջեն փաստացի կազմել է 50 316 800 ՀՀ դրամ⁵⁶:

Պետք է նաև հաշվի առնել, որ երիտասարդներին ուղղված այլ ծրագրեր, հետևաբար ֆինանսավորում առկա են այլ բաժիններում, օրինակ՝ կրթական, մշակութային, սպորտի և այլն: Մյուս կողմից ուշագրավ է, որ 2020 թ. համար համայնքի միջոցներով համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված 19 ծրագիր և միջոցառում է նախատեսված եղել, որոնք չեն իրականացվել՝ Covid-19 համավարակով պայմանավորված⁵⁷:

Քաղաքացիական հասարակություն և երիտասարդական տեղական քաղաքականություն

Գյումրի քաղաքն ունի հասարակական կազմակերպությունների լուրջ ներուժ, որոնք ուղղակի կամ անուղղակի աշխատում են երիտասարդների հետ՝ որպես թիրախ խմբի⁵⁸: Քաղաքում գործում է նաև հանրապետությունում միակ համայնքային երիտասարդական կառույցը՝ «Երիտասարդական պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

Պատահական չէ, որ հենց Գյումրի քաղաքն է, որ առաջին անգամ Հայաստանում նախաձեռնել է ունենալ երիտասարդական տեղական քաղաքականություն՝ քաղաքացիական հասարակության ջանքերի շնորհիվ: Ընդ որում, 2015 թ.-ին Գյումրի քաղաքի երիտասարդության իրավիճակի վերլուծությունը ևս Հայաստանում առաջին փորձն էր:

Գյումրու երիտասարդական տեղական քաղաքականության նախապատմությունը

Գյումրու երիտասարդական քաղաքականությունը 2016 թ. մշակել են Գյումրու երիտասարդական խորհուրդ ոչ ֆորմալ փորձագիտական նախաձեռնությունն ու ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ն՝ հիմնվելով «Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն» զեկույցի արդյունքների վրա՝ «Գյումրու երիտասարդական քաղաքականության մշակում և ներդրում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ⁵⁹:

⁵⁶ 2020 թ.-ին Գյումրի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (2017-2021 թթ.) իրականացման վերաբերյալ հաշվետվություն, Հավելված 1, կետ 15, https://www.gyumricity.am/data/legalacts/2021/%D5%B0%D5%B6%D5%A3%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1_%D5%A6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80_1.pdf [21.04.2020]:

⁵⁷ Նույն աղբյուրը, Հավելված 2՝ Տեղեկատվություն 2020 թ.-ի համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված ծրագրերի մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ [21.04.2020]:

⁵⁸ Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, Հետազոտության զեկույց, ԵՄԻԿ, ԵՈՒԻ, Երևան, 2014 թ., <https://hkdepo.am/up/docs/Report-24-03-2015.pdf> [12.12.2020]:

⁵⁹ <https://compass-center.org/wp-content/uploads/2020/02/%D4%B3%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4%D6%80%D5%B8%D6%82-%D5%A5%D6%80%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf> [12.12.2020]:

Ծրագրի շրջանակներում մշակվել են հետևյալ փաստաթղթերը՝

- ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի երիտասարդական քաղաքականության 2017-2026 թթ. հայեցակարգի նախագիծը,
- ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի երիտասարդական քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարության նախագիծը, այդ թվում՝ գործողությունների ծրագիրը:

Նախագծերն այդ ժամանակ հանձնվել են Գյումրու համայնքապետարանին՝ հաստատման և իրականացման նպատակով, սակայն դրանք չեն վավերացվել և կիրառում այդպես էլ չեն ունեցել:

Հետագայում այս փաստաթղթերը լրամշակվել են Գյումրու ԵՆԿ ՀԿ-ի ջանքերով և կրկին ներկայացվել Գյումրու համայնքապետարանին^{60 61}:

Ռազմավարության մեջ ամրագրված են հետևյալ վեց թիրախային ոլորտները՝ հիմնվելով 2015 թ. Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծության և 2016 ու 2019 թթ.-ին Գյումրու երիտասարդության շրջանում իրականացված հանրային և փորձագիտական կարծիքի ուսումնասիրության արդյունքների վրա՝

1. երիտասարդական աշխատանք և երիտասարդական քաղաքականություն,
2. իրազեկում և մասնակցություն,
3. շարունակական և ոչ ֆորմալ կրթություն,
4. զբաղվածություն և ձեռներեցություն,
5. առողջ ապրելակերպ,
6. ժամանց:

Նախատեսվում էր, որ լրամշակված նախագծերը 2020 թ.-ին համայնքապետարանում անցնելու էին հաստատման գործընթաց, սակայն դրանք մինչ օրս ավագանու քննարկմանը չեն ներկայացվել:

Այստեղ կարևոր է նշել, որ Գյումրու համայնքապետարանի կողմից երիտասարդական քաղաքականության փաստաթղթերի ընդունումը ամրագրված է նաև Գյումրի համայնքի զարգացման հնգամյա ծրագրում⁶²:

Ներդիր 2. Գյումրու երիտասարդական տեղական քաղաքականության նախապատմությունը

Ինչպես տեսնում ենք, Գյումրին ունի մարդկային, ֆինանսական ու մշակութային կապիտալ՝ երիտասարդական տեղական քաղաքականության մշակման և իրականացման համար:

Այժմ անդրադառնանք, թե ինչ ուղղություններով է պետք զարգացնել երիտասարդական տեղական քաղաքականությունը՝ կարիքներն ու խնդիրներն առավելագույնս հասցեական լուծելու նպատակով՝ հիմնվելով համայնքի ողջ ներուժի ու հնարավորությունների վրա:

⁶⁰ <https://www.gyumricity.am/hy/information-center/news/1180-----2020-2029---2020-2021-----> [12.12.2020]:

⁶¹ <https://www.facebook.com/media/set/?vanity=YICgyumri&set=a.2918044784895605> [12.12.2020]:

⁶² Գյումրի համայնքի հնգամյա զարգացման ծրագիր (2017-2021 թթ.), Էջ 27, <https://docs.google.com/viewer?url=https%3A%2F%2Fwww.gyumricity.am%2FDecision2017%2FDecision.06.11.2017%2F117.1.docx> [12.12.2020]:

Աշխատաշուկայի վերջին հետազոտությունները վկայում են, որ Շիրակում, մասնավորապես՝ Գյումրի քաղաքում մի շարք ոլորտներ կան, որոնք կարող են նպաստել զբաղվածության մակարդակի բարձրացմանը՝

Ոլորտ	Մասնագետ	Հմտություններ
Ծառայությունների ոլորտ	Մատուցող, հավաքարար, խոհարար, փակ և բացօթյա տարածքներում հանրային մուտք կազմակերպող մասնագետ, ձկնաբույծ, ռեստորատոր, արտաքին շուկաների ներգրավման մասնագետ, վաճառքի, գովազդի, մարքեթինգի, հասարակայնության հետ կապերի (PR) մասնագետներ, արտ մենեջեր, միջոցառումների կազմակերպիչ (event manager), վերապատրաստող, մատնահարդար, դիմահարդար, դաջվածքների մասնագետ:	Հաղորդակցության հմտություն, ինքնատիրապետում, հուզական ինտելեկտ, հումորի զգացում, պարտաճանաչություն, աշխատասիրություն, ազնվություն, կազմակերպչական հմտություններ, մաքրասիրություն, անձնակազմի կառավարման հմտություններ:
Արհեստ	Կավագործ, խեցեգործ, բրուտագործ, Էկոնյութերով աշխատող տեքստիլի մասնագետ, վաճառքի, գովազդի, մարքեթինգի, PR մասնագետներ:	Պարտաճանաչություն, հաղորդակցության հմտություն:
Արվեստ	Նկարիչ, բարձր նորաձևության տների դիզայներ, ճարտարապետ, դիզայներ, գրաֆիկ դիզայներ:	Սովորելու ցանկություն:
Չբոսաշրջություն	Չբոսավար, տուր մենեջեր, քայլարշավային, արկածային տուրիզմի, ագրոտուրիզմի, Էկոտուրիզմի մասնագետներ / զբոսավարներ:	Հաղորդակցության հմտություն, լեզուների տիրապետում, ինքնատիրապետում, հուզական ինտելեկտ, հումորի զգացում, կենսուրախություն, պարտաճանաչություն, աշխատասիրություն, ազնվություն, կազմակերպչական հմտություններ, երաժշտության, աշխարհագրության, պատմության իմացություն:

Աղյուսակ 2. Աշխատանքի հնարավորությունները Գյումրիում⁶³

⁶³ Աշխատանքի հնարավորությունների քարտեզագրում. Լոռի, Շիրակ, Սյունիք մարզերում, Հետազոտության հաշվետվություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ, ԿՀԽԿ, Երևան, 2019 թ., https://dvv-international.ge/fileadmin/files/caucasus-turkey/Armenia/Resources/Labour-market_mapping_Report.pdf [12.12.2020]:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում, հատկապես մարզերում սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվելու տիրույթներ կան: Սոցիալական ձեռնարկություններ կարող են հիմնադրել նաև մարզերի տարբեր խոցելի խմբեր՝ գործազուրկները, երիտասարդները, հաշմանդամություն ունեցող անձինք, կանայք՝ անձնական հետաքրքրությունների հիման վրա, որոնք կարող են վերածվել բիզնես նախագծերի համապատասխան հմտություններ ունենալու դեպքում: Սոցիալական ձեռնարկատիրության համար մարզերում հսկայական ներուժ կա՝ կանանց կողմից ղեկավարվող հյուրատների հիմունք, օրգանական սննդի պատրաստում, աղբի վերամշակում, տարեցների կողմից սպասարկվող սննդի և կեցության ծառայությունների ստեղծում և այլն⁶⁴:

ՀՀ-ում ստեղծարար տնտեսությունների զարգացման միտում ևս կա, ընդ որում, արդեն զարգանում են և հեռանկարային են տեղեկատվական տեխնոլոգիաների և ճարտարապետության ճյուղերը⁶⁵:

Գյուղի քաղաքը ևս կարող է զարգացնել այս ուղղությունները՝ նպաստելով երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանը:

Գործողությունների առաջնահերթություններ

Երիտասարդական տեղական քաղաքականությունը կարող է ձևավորվել հետևյալ առաջնահերթությունների շուրջ, ընդ որում, առաջնահերթությունները կարելի է բաշխել ըստ կարճաժամկետ միջամտության և երկարաժամկետ միջամտության՝

Կարճաժամկետ միջամտության գործողությունների առաջնահերթություններ (մինչև 5 տարի)՝

- Երիտասարդական աշխատանքի զարգացում,
- Երիտասարդներին ուղղորդող ծառայությունների զարգացում,
- Երիտասարդների զբաղվածության բարձրացում ծառայությունների և ստեղծարար ոլորտներում,
- Ազատ տարածքների ձևավորում երիտասարդների համար, այդ թվում՝ երիտասարդների շարժունությանը նպաստող գործընթացների ձևավորում և զարգացում,
- Խմբային աշխատանքների, համայնքային նախաձեռնությունների խրախուսման մեխանիզմների ներդրում և զարգացում, այդ թվում՝ ավագ սերնդի ներկայացուցիչների, խոցելի և մարզինալ խմբերի երիտասարդների հետ համատեղ,
- Քաղաքական համակարգերի վերաբերյալ տեղեկատվության մակարդակի բարձրացում,
- Փափուկ (ճկուն) և կյանքի հմտությունների զարգացում, այդ թվում՝ սթրեսի հաղթահարում, հուզական գրագիտություն, ռիսկերի կառավարում,
- Հետտրավմատիկ խանգարումների հաղթահարում՝ երիտասարդների հոգեկան առողջության վերաբերյալ մասնագիտական հետազոտությունների իրականացում և աջակցություն:

⁶⁴ Նույն աղբյուրը:

⁶⁵ Ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները, Հետազոտության արդյունքների վերլուծություն, ԵՈՒԻ, Երևան, 2018, <https://erit.am/documents/pdf/ec74d7daa35a20c949c1ed2a6130012f.pdf> [12.12.2020]:

Երկարաժամկետ միջամտության գործողությունների առաջնահերթություններ (5 տարուց ավել)՝

Մի շարք խնդիրներ, որոնք վեր են հանվել հետազոտության շրջանակներում, պահանջում են երկարատև միջամտություն՝

- Երիտասարդների ֆինանսական անկախության ձևավորում,
- Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում,
- Ենթակառուցվածքների բարելավում,
- Հոգևոր հարցերի կարևորմանն ուղղված գործողություններ,
- Հետտրավմատիկ խանգարումների հաղթահարում՝ երիտասարդների հոգեկան առողջության վերաբերյալ մասնագիտական հետազոտությունների իրականացում և աջակցություն:

Հետտրավմատիկ սթրեսային վիճակի հաղթահարման սկզբունքներ

1. Արևմտյան հոգեբուժական և սոցիալ-հոգեբանական մոտեցումներն ու թերապիաները չպետք է կրկնօրինակվեն ոչ արևմտյան երկրներում առանց զգուշավոր և մանրամասն նախապատրաստման և հարմարեցման (Boothby 1993):
2. Հոգեկան առողջության ծրագրերը պետք է զգայուն լինեն և, որքան հնարավոր է, պետք է հիմնվեն ճանաչողական խանգարումների տեղական մշակութային ընկալումների վրա (Green and Honwana 1999):
3. Հոգեկան առողջության ծրագրերը կարող են վերացնել ախտանիշները, բայց ոչ պատճառները:
4. Երիտասարդությունը դիմակայում է բռնությանը և վայրագություններին գուցե այն պատճառով, որ երիտասարդները կողմնորոշված են դեպի ապագան:
5. Տրավմաների առաջացումը, առաջխաղացումը կանխելու համար չի կարելի թերագնահատել աշխատատեղերի և կրթության արժեքը, պետք է երիտասարդներին զբաղեցնել և նրանց հետագա հեռանկարներ տալ:
6. Երիտասարդներն ունեն հասակակիցների (peer) խմբեր, որոնք ունեցել են նման փորձեր: Հետևաբար, ընդհանուր շատ խնդիրների քննարկումն ընկերների շրջանում կարող է օգտակար լինել:
7. Մշակութային առումով զգայուն հոգեբանական, սոցիալական աջակցությունը չպետք է կենտրոնանա միայն մեկ հատուկ թիրախային խմբի վրա, այլ դրա փոխարեն պետք է ուղղված լինի բոլոր երեխաներին, կամ երիտասարդներին, կամ մի ամբողջ համայնքի՝ պիտակավորման ռիսկերը նվազեցնելու համար:
8. Տրավմաների բուժմանն ուղղված տեղական խորհրդատվությունները հաճախ կենտրոնանում են ներկա և ապագա գործնական խնդիրների և տագնապների վրա, քան անցյալի⁶⁶:

Ներդիր 3. Հետտրավմատիկ սթրեսային վիճակի հաղթահարման սկզբունքներ

Սրանք էին այն հիմնական հնարավորություններն ու ներուժը, որն ունի Գյումրին՝ որպես համայնք՝ երիտասարդների կարիքներին և խնդիրներին հասցեական լուծումներ տալու համար:

⁶⁶ What Happens to Youth During and After Wars?: A Preliminary Review of Literature on Africa and an Assessment of the Debate, Report prepared for RAWOO by Krijn Peters, Paul Richards, Koen Vlassenroot, RAWOO Working Paper, 2003.

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարող ենք կատարել հետևյալ **Եզրահանգումները՝**

- Գյումրու երիտասարդներն այսօր բախվում են մի շարք մարտահրավերների՝ գործազրկություն, ինքնուրույնության պակաս, այդ թվում՝ ֆինանսական կախվածության բարձր մակարդակ, պատերազմի և համավարակի հետևանքով սթրեսներ, տրավմաներ:
- Գյումրու երիտասարդները զրկված են մի շարք հնարավորություններից՝ ենթակառուցվածքների պակաս կամ բացակայություն, այդ թվում՝ տրանսպորտային ցանցի, ժամանցի և մշակութային կենտրոնների պակաս կամ բազմազանության բացակայություն, աշխատատեղերի սահմանափակ հնարավորություններ, կրթության, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների անհասանելիություն՝ վճարով և այլընտրանքների բացակայությամբ պայմանավորված :
- Գյումրու երիտասարդներն ունեն մի շարք ձգտումներ՝ ըստ իրենց ֆինանսական դրության բարելավման, զարգացման ու կատարելագործման, ինչպես նաև մտավոր անկախության բարձրացման:
- Գյումրու երիտասարդները ցանկանում են մասնակցել որոշումների կայացմանը, ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակում:
- Գյումրու երիտասարդների առօրյա վարքագծի վրա էական նշանակություն ունեն կարծրատիպերը, համայնքային համերաշխության պահպանման ձգտումը:
- Գյումրու երիտասարդների ձգտումներում և ցանկություններում գերակշռում է նյութական վիճակի բարելավման ձգտումը:
- Գյումրու երիտասարդները հաճախ չեն զբաղվում այն գործունեությամբ, որով կարող են և/կամ երազում են զբաղվել:
- Գյումրու երիտասարդներն ուղղորդման, աջակցության կարիք ունեն՝ ըստ մասնագիտության, զբաղվածության, կատարելագործման ուղիների ընտրության:
- Գյումրի քաղաքն ունի երիտասարդական ոլորտի զարգացման համար ներուժ՝ քաղաքացիական հասարակության և կրթական կենտրոնների գործունեության համար բավարար նպաստավոր միջավայր:

Հիմք ընդունելով հետազոտության հիմնական եզրահանգումները՝ կարող ենք ներկայացնել հետևյալ **առաջարկները՝** Գյումրի քաղաքի երիտասարդական տեղական քաղաքականության բարելավման ուղղությամբ՝

- Հետազոտությամբ վեր հանված մի շարք խնդիրների կանխարգելման և լուծման նպատակով աշխատել միջին և բարձր տարիքի դպրոցահասակների, ինչպես նաև նրանց անմիջական շրջապատի հետ (ընտանիք, ընկերներ, հասակակիցների խմբեր, կարծիքի առաջատարներ), մասնավորապես հետևյալ խնդիրների ու հարցերի շուրջ՝ առողջ ապրելակերպի մշակույթ, գենդերային կարծրատիպեր:

- Համայնքում ներդնել միջսերնդային համագործակցության, մենթորության մեխանիզմներ, որտեղ երիտասարդներն ու մեծահասակները համատեղ աջակցություն կտրամադրեն միմյանց:
- Մշակել և իրականացնել գործողություններ՝ ուղղված երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը՝ կանխարգելիչ առողջապահական ծառայություններից օգտվելու մշակույթի ձևավորում, վնասակար սովորույթներից հրաժարում և այլն:
- Բարձր տարիքի դպրոցահասակների շրջանում ակտիվորեն իրականացնել աշխատաշուկայի պահանջարկի իրագեկմանն ուղղված արշավներ, միջոցառումներ:
- Գյումրի քաղաքում աշխատատեղերի սահմանափակման վերացման նպատակով մշակել և ներդնել երիտասարդների՝ ստեղծարար տնտեսության ոլորտներ ներգրավման մեխանիզմներ:
- Գյումրի քաղաքում ներդնել սոցիալական ձեռնարկությունների ստեղծման խրախուսման մեխանիզմներ:
- Գյումրի քաղաքում շարունակաբար զարգացնել երիտասարդական աշխատողների՝ որպես երիտասարդների մենթորների ինստիտուտը:
- Ստեղծել ֆիզիկական և վիրտուալ տարածքներ, հարթակներ, հնարավորություններ՝ հոգևոր, մշակութային հարցեր բարձրացնելու, թեմաներ քննարկելու:
- Կիրառելով ոչ ֆորմալ կրթության մոտեցումները՝ պլանավորել հատուկ գործողություններ քաղաքացիական ներգրավվածության ձևերի, ակտիվության հնարավոր արդյունքների և երիտասարդների դերի վերաբերյալ: Նաև կարևոր է հատուկ աջակցություն ցուցաբերել գործող ակտիվ երիտասարդների փոքր խմբին, որոնք կարող են լինել երիտասարդ կարծիքի առաջնորդներ և հասակակիցներին գիտելիքներ/գաղափարներ տրամադրողներ՝ դառնալով երիտասարդության խնդիրների բարձրաձայնամաբ, շահերի պաշտպանությամբ զբաղվող խմբեր:
- Մշակել և ներդնել երիտասարդական նախաձեռնությունների խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև հավաքագրել ու հանրայնացնել երիտասարդական նախաձեռնությունների հաջողված դեպքերը:
- Լրամշակել և հաստատել երիտասարդական տեղական քաղաքականությունը՝ հիմք ընդունելով հետազոտությամբ վեր հանված կարճաժամկետ և երկարաժամկետ առաջնահերթությունները:
- Գյումրու երիտասարդների վերաբերյալ գիտելիքի, տեղեկատվության ստացման գործընթացը դնել շարունակական և կայուն հիմքերի վրա՝ նպաստելով փաստահեն և մասնակցային երիտասարդական տեղական քաղաքականության մշակմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանք Չայաստանում ավելի լավ ապագայի համար, Աշխատատեղերի դինամիկայի վերլուծություն, Չամաշխարհային բանկ, 2019 թ.,

<https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/34412/Work-for-a-Better-Future-in-Armenia-An-Analysis-of-Jobs-Dynamics-ARM.pdf>

Աշխատանքի հնարավորությունների քարտեզագրում. Լոռի, Շիրակ, Սյունիք մարզերում, Չետագոտության հաշվետվություն, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, Երևան, 2019 թ.,

https://dvv-international.ge/fileadmin/files/caucasus-turkey/Armenia/Resources/Labour-market_mapping_Report.pdf

Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրություն. Գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, 2015 թ.,

<https://escs.am/am/news/4909> (կամ <https://old.erit.am/media/2016/03/161.pdf>)

Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն, Գյումրու Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն ՉԿ, Գյումրու երիտասարդական խորհուրդ, Գյումրի, 2015 թ., <https://gyumriypd.files.wordpress.com/2015/05/gyumri-youth-situation-analysis-hy.pdf>

Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, Չետագոտության զեկուլց, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2014 թ., <https://hkdepo.am/up/docs/Report-24-03-2015.pdf>

Երիտասարդություն, Աշխատանքի շուկան Չայաստանում, 2020, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2020 թ., https://armstat.am/file/article/trud_2020_9.pdf

Չայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2020, Մաս 2. Բնակչություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/demog_2020_2.pdf

Չայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020, Մաս 1. Աղքատության պատկերը Չայաստանում 2009-2019 թթ., ՀՀ վիճակագրական կոմիտե, https://armstat.am/file/article/poverty_2020_a_2..pdf

ՀՀ արտաքին միգրացիայի եռամյա մշտադիտարկում (2015-2017), Եզանյան Ռ., Երևան, 2017 թ.

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարության մոնիթորինգի և գնահատման հաշվետվություն, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2016 թ., <https://ystudies.am/reports/4419>

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշում <https://escs.am/files/files/2019-08-30/e92e607a253f41e850a77275c261b0ab.pdf> (կամ <https://old.erit.am/media/2016/06/1980.pdf>)

ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2013 թ., <https://escs.am/am/news/4908> (կամ <https://old.erit.am/media/2016/05/1103.pdf>)

Մասնագիտական դասընթացներին երիտասարդների մասնակցությունը որպես աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու գործիք, Մ. Գալստյան, Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում, Ուսումնական կյանքերի ժողովածու, Երևան, 2018 թ., էջ 111, http://publishing.yasu.am/files/Metsahasakneri_krtutyun.pdf

Մարդկային զարգացման ազգային զեկուլյց 2018/2019, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019 թ. <https://www.am.undp.org/content/armenia/en/home/library/the-right-to-a-future--youth-that-transforms-armenia.html>

Ստեղծարար տնտեսության մեջ երիտասարդների զբաղվածության ներուժը և զարգացման հեռանկարները, Հետազոտության արդյունքների վերլուծություն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Երևան, 2018 թ., <https://erit.am/documents/pdf/ec74d7daa35a20c949c1ed2a6130012f.pdf> (կամ <https://old.erit.am/media/2020/06/20908.pdf>)

Գյումրիի համայնքի հնգամյա զարգացման ծրագիր (2017-2021 թթ.) և առնչվող փաստաթղթեր, <https://www.gyumricity.am/hy/gyumri-community/projects>

Child Soldiers: The Role of Children in Armed Conflict, Ilene Cohn, Guy S. Goodwin-Gill, Institut Henry-Dunant, Clarendon Press, 1994

Growing Up and Going Out: Adolescents and Leisure, Leo B. Hendry, Aberdeen University Press, 1983

Invisible Stakeholders: Children and war in Africa, Angela McIntyre, Pretoria: Institute for Security Studies, 2005

Key concepts in youth studies, Mark Cieslik, Donald Simpson, Sage publications, 2013.

Leaving Home in the European Union, Maria Iacovou, Working papers of the Institute for Social and Economic Research, paper 2001-18. Colchester: University of Essex, 2001

Men and Gender Equality In Armenia, Report on sociological survey findings, UNFPA in Armenia, Yerevan, 2016, https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf

Post-War Reconstruction and Development: Coming of Age. Chap.1 in After the Conflict: Reconstruction and Development in the Aftermath of War. Sultan Barakat, Publisher: I.B.Tauris, 2005

Street Corner Society: The Social Structure of an Italian Slum, William Foote Whyte, 4th edn. Chicago: University of Chicago Press, 1993

The relationship between sense of hope, family support and post-traumatic stress disorder among children: The case of young victims of rocket attacks in Israel, Jonathan Kasler, Jessica Dahan, Maurice J. Elias, *Vulnerable Children and Youth Studies*, Vol. 3, No. 3, pp. 182–191, 2008

The Role of Youth in Post-Conflict Reconstruction (The Case of Liberia), Marit Woods, SIT Graduate Institute, 2011

The Unexplored Power and Potential of Youth as Peace-builders, Celina Del Felice, Andria Wisler, *Journal of Peace Conflict & Development*, 2007, https://www.creducation.net/resources/Power_and_Potential_of_Youth_as_Peace-Builders.pdf

What Happens to Youth During and After Wars?: A Preliminary Review of Literature on Africa and an Assessment of the Debate, Report prepared for RAWOO by Krijn Peters, Paul Richards, Koen Vlassenroot, RAWOO Working Paper, 2003

Young People's Participation in Local Development: Lip Service or Serious Business?, Liisa Horelli. In Helena Helve and Claire Wallace (eds.), *Youth Citizenship and Empowerment* (pp. 57-69). United Kingdom: Ashgate, 2001

Youth and COVID-19: Impacts on Jobs, Education, Rights and Mental well-being, International Labour Organization, 2020, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_emp/documents/publication/wcms_753026.pdf

Youth and COVID-19: Response, Recovery and Resilience, OECD, 2020, https://read.oecd-ilibrary.org/view/?ref=134_134356-ud5kox3g26&title=Youth-and-COVID-19-Response-Recovery-and-Resilience

Youth Development, Reintegration, Reconciliation and Rehabilitation in Post-conflict West Africa: A framework for Sierra Leone, Liberia and Cote d'Ivoire, Dabesaki Mac-Ikemenjima, *International NGO Journal* Vol. 3 (9), pp. 146-151, 2008, <https://resourcecentre.savethechildren.net/pdf/Youth-development-and-rehabilitationA-framework-for-Sierra-Leone-Liberia-and-Cote-D%E2%80%99Ivoire-2008.pdf/>

Youth Involvement for Community, Organizational, and Youth Development: Directions for Research, Evaluation and Practice, Matthew Calvert, Shepherd Zeldin, Amy Weisenbach, Innovation Center for Community and Youth Development, 2002

Youth Political Participation: Literature review, Youth Partnership, Galstyan, M., 2019, https://pjp-eu.coe.int/documents/42128013/47262631/Youth-Political-participation_Lit+review_BRIEF_FINAL.pdf

Идентичность: юность и кризис, Эриксон Э., Пер. с англ., Общ. ред. и предисл. Толстых А.В., Издательская группа "Прогресс", Москва, 1996

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Առցանց հարցման մասնակիցների սեռատարիքային կազմը (N=370, %)	6
Գծապատկեր 2. ՀՀ բնակչության տարիքային բուրգը, 2010 և 2020 թթ. տարեսկզբին, աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե.....	9
Գծապատկեր 3. Չբավարարվածության և գործազրկության ցուցանիշները (տոկոսներով) 15-29 տարեկան երիտասարդների շրջանում 2019 թ.-ին, ՀՀ վիճակագրական կոմիտե	11
Գծապատկեր 4. Աղքատությունը (տոկոսներով) 15-29 տարեկան երիտասարդների շրջանում 2019 թ.-ին, ՀՀ վիճակագրական կոմիտե	12
Գծապատկեր 5. Ձեր կարծիքով, ո՞րն է երիտասարդության ամենակարևոր խնդիրը Գյումրի քաղաքում (մինչև 5 պատասխան). Պատասխանների նշվածությունը՝ նվազման կարգով (N=370, %).....	18
Գծապատկեր 6. Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ ունենալու պարագայում ինչպե՞ս կտնօրինեք Ձեր ազատ ժամանակը: Հնարավոր է մի քանի պատասխան (N=370, %).....	19
Գծապատկեր 7. Աշխատանքի տեսակը (N=151, %)	21
Գծապատկեր 8. Երիտասարդների քաղաքական, քաղաքացիական մասնակցությունը (N=370, %).....	22
Գծապատկեր 9. Արդյոք որևէ կազմակերպության անդամ եք (հասարակական, քաղաքական, կրոնական և այլն) (N=370, %)	23
Գծապատկեր 10. Կարծում եք, թե կարո՞ղ եք Գյումրի քաղաքի և երկրի մակարդակով ազդեցություն ունենալ որոշում կայացնողների վրա (N=370, %, նշել մի քանի պատասխան)	24
Գծապատկեր 11. Վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ եք... (N=370, %).....	25
Գծապատկեր 12. Վերջին մեկ տարվա ընթացքում արդյոք մասնակցե՞լ եք որևէ դասընթացի (N=370, %) 26	
Գծապատկեր 13. Հարցմանը մասնակցած երիտասարդների եկամտի չափը (ՀՀ դրամ) (N=370, %)	27
Գծապատկեր 14. Ի՞նչ կցանկանայիք փոխել ձեր կյանքում (N=370, %, մի քանի ընտրություն)	28
Գծապատկեր 15. Գյումրու երիտասարդների անկախությունը և ինքնուրույնությունը (N=370, %).....	28
Գծապատկեր 16. Ըստ Ձեզ՝ որո՞նք են համավարակի հետևանքով առաջացած հիմնական խնդիրները, որոնց այսօր հանդիպում են երիտասարդները (N=370, %, մի քանի տարբերակ).....	31
Գծապատկեր 17. Ինչպե՞ս է ազդել համավարակը Ձեր կյանքի վրա (N=370, %, մի քանի տարբերակ)	32
Գծապատկեր 18. Ըստ Ձեզ՝ որո՞նք են 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով առաջացած հիմնախնդիրները, որոնց այսօր հանդիպում են երիտասարդները (N=370, %, մի քանի տարբերակ).....	33
Գծապատկեր 19. Ինչպե՞ս է ազդել 2020 թ. 44-օրյա պատերազմը Ձեր կյանքի վրա (N=370, %, մի քանի տարբերակ).....	33
Գծապատկեր 20. Ըստ Ձեզ՝ կարո՞ղ է արդյոք երիտասարդությունն ազդեցություն ունենալ պատերազմի հետևանքների հաղթահարման և երկրում քաղաքական իրավիճակի կայունացման վրա (N=370, %).....	34
Գծապատկեր 21. Երիտասարդների մասնակցությունը 2020 թ. Արցախյան պատերազմին (N=370, %, մի քանի պատասխան)	35
Գծապատկեր 22. Ինչպիսի՞ն են առաջիկայում Ձեր պլանները (N=370, %).....	36
Գծապատկեր 23. Գյումրի քաղաքի մշտական բնակչության դինամիկան, ՀՀ վիճակագրական կոմիտե, 2020 թ.	37

ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. 2015 և 2020 թթ. հետազոտությունների համեմատություն	23
Աղյուսակ 2. Աշխատանքի հնարավորությունները Գյումրիում	40

ՆԵՐԴԻՐՆԵՐ

Ներդիր 1. «Վերածնվող Գյումրի» կտավը	30
Ներդիր 2. Գյումրու երիտասարդական տեղական քաղաքականության նախապատմությունը ..	39
Ներդիր 3. Հետտրավմատիկ սթրեսային վիճակի հաղթահարման սկզբունքներ	42

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

Հիմնական տեղեկատուների հետ հարցազրույցի հարցաշար

Քննարկման նպատակն է բացահայտել Գյումրու երիտասարդների կարիքներն ու ձգտումները:

Նշում հարցազրույցավարի համար

Ներկայանալ՝ անունը, ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել հարցազրույցի նպատակը, արդյունքները, տևողությունը: Հավաստիացնել, որ կպահպանվի հարցազրույցի ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը: Ներկայացնել մասնակցության համաձայնության թերթիկը:

Նշել, որ հարցազրույցը ձայնագրվելու է (հնարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

- Խնդրում եմ ներկայացնել՝ կառույց, պաշտոն, մասնագիտություն, այլ զբաղվածություն: Ի՞նչ առնչություն ունեք երիտասարդական ոլորտին, երիտասարդների հետ աշխատանքին:
- Խնդրում եմ ասեք, Ձեր կարծիքով, այսօրվա հայաստանյան երիտասարդությունը, ընդհանուր առմամբ, ի՞նչ կարիքներ ունի: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Քաղաքական կյանքին մասնակցելու ժամանակ երիտասարդներն ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Չբաղվածության և աշխատաշուկայում ներգրավվելու առումով երիտասարդներն ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Մշակութային կյանքին մասնակցելու ժամանակ երիտասարդներն ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Տեղեկատվության հասանելիության/ստացման մակարդակում ի՞նչ կարիքներ ունեն երիտասարդները: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Առողջ ապրելակերպի ինչպիսի՞ խնդիրներ կառանձնացնեք, որոնց հանդիպում են երիտասարդները, այդ թվում՝ սահմանափակ կարողություններով երիտասարդները: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Հոգևոր-մշակութային բնույթի ի՞նչ կարիքներ կառանձնացնեք: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:

- Այսօր երիտասարդներն իրենց կրթական գործընթացների կազմակերպմանն առնչվող ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ՝ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Այսօր երիտասարդներն ինչպիսի՞ կրթության կարիք ունեն՝ բովանդակություն, ձևաչափ: Խնդրում եմ՝ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Ուրիշ ի՞նչ կարիքներ կառանձնացնեք, որոնց այսօր չանդրադարձանք:
- Համավարակն ի՞նչ կարիքների և խնդիրների առաջ է կանգնեցրել երիտասարդներին: Այդ խնդիրներն ինչպե՞ս կարելի է լուծել:
- Համավարակն ի՞նչ նոր հնարավորություններ ստեղծեց: Եթե Գյումրու երիտասարդների համար առանձնահատուկ հնարավորություն է ստեղծել, խնդրում եմ նշել:
- Պատերազմն ինչպիսի՞ ազդեցություն թողեց երիտասարդների վրա, այդ թվում՝ Գյումրու: Ինչպե՞ս կարելի է ուժեղացնել դրական ազդեցությունը և ինչպե՞ս չեզոքացնել բացասական ազդեցությունը:
- Երիտասարդների կարիքների, խնդիրների վերաբերյալ կա՞ն մտքեր, որոնց չանդրադարձանք, եթե այո, խնդրում եմ, ներկայացրե՛ք:

Շնորհակալություն հայտնել հարցազրույցի համար:

Երիտասարդական ոլորտի ՅԿ-ների ներկայացուցիչների հետ խմբային քննարկման ուղեցույց

Քննարկման **նպատակն** է բացահայտել Գյումրու երիտասարդների կարիքներն ու ձգտումները, ինչպես նաև դրանց արձագանքելու ՅԿ-ների միջոցառումների նկարագիրը:

Նշում մոդերատորի համար

Ներկայանալ՝ անունը, ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել քննարկման նպատակը, արդյունքները, տևողությունը: Հավաստիացնել, որ կպահպանվի քննարկման ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը: Ներկայացնել մասնակցության համաձայնության թերթիկը:

Նշել, որ ֆոկուս խմբային քննարկումների ընթացքը ձայնագրվելու է (հնարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

Գրանցել մասնակիցների թիվը, տալ կազմի հակիրճ ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ կրթական մակարդակը, գբաղվածությունը, սեռը, տարիքը:

- Խնդրում եմ, ներկայացե՛ք՝ կառույց, պաշտոն, մասնագիտություն, այլ գբաղվածություն: Ի՞նչ առնչություն ունեք երիտասարդական ոլորտին, երիտասարդների հետ աշխատանքին:
- Խնդրում եմ՝ ասե՛ք, Ձեր կարծիքով, այսօրվա հայաստանյան երիտասարդությունը, ընդհանուր առմամբ, ի՞նչ կարիքներ ունի: Խնդրում եմ՝ նշե՛ք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Քաղաքական կյանքին մասնակցելու ժամանակ երիտասարդներն ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ՝ նշե՛ք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Չբաղվածության և աշխատաշուկայում ներգրավվելու առումով երիտասարդներն ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ՝ նշե՛ք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Մշակութային կյանքին մասնակցելու ժամանակ երիտասարդներն ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ՝ նշե՛ք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Տեղեկատվության հասանելիության/ստացման մակարդակում ի՞նչ կարիքներ ունեն երիտասարդները: Խնդրում եմ՝ նշե՛ք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Առողջ ապրելակերպի ինչպիսի՞ խնդիրներ կառանձնացնե՛ք, որոնց հանդիպում են երիտասարդները, այդ թվում՝ սահմանափակ կարողություններով երիտասարդները: Խնդրում եմ՝ նշե՛ք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Հոգևոր-մշակութային բնույթի ի՞նչ կարիքներ կառանձնացնե՛ք: Խնդրում եմ՝ նշե՛ք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:

- Այսօր երիտասարդներն իրենց կրթական գործընթացների կազմակերպմանն առնչվող ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Այսօր երիտասարդներն ինչպիսի՞ կրթության կարիք ունեն՝ բովանդակություն, ձևաչափ: Խնդրում եմ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Ուրիշ ի՞նչ կարիքներ կառանձնացնեք, որոնց այսօր չանդրադարձանք:
- Համավարակն ի՞նչ կարիքների և խնդիրների առաջ է կանգնեցրել երիտասարդներին: Այդ խնդիրներն ինչպե՞ս կարելի է լուծել:
- Համավարակն ի՞նչ նոր հնարավորություններ ստեղծեց: Եթե Գյումրու երիտասարդների համար առանձնահատուկ հնարավորություն է ստեղծել, խնդրում եմ նշել:
- Պատերազմն ինչպիսի՞ ազդեցություն թողեց երիտասարդների վրա, այդ թվում՝ Գյումրու: Ինչպե՞ս կարելի է ուժեղացնել դրական ազդեցությունը և ինչպե՞ս չեզոքացնել բացասական ազդեցությունը:
- Երիտասարդների կարիքների, խնդիրների վերաբերյալ կա՞ն մտքեր, որոնց չանդրադարձանք, եթե այո, խնդրում եմ, ներկայացրեք:

Շնորհակալություն հայտնել մասնակցության համար:

Կրթական ծառայությունն մատուցողների հետ խմբային քննարկման ուղեցույց

Քննարկման **նպատակն** է բացահայտել երիտասարդների կարիքներն ու ձգտումները, մասնավորապես կրթության և զբաղվածության ոլորտում:

Նշում մոդերատորի համար

Ներկայանալ՝ անունը, ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել քննարկման նպատակը, արդյունքները, տևողությունը: Հավաստիացնել, որ կպահպանվի քննարկման ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը: Ներկայացնել մասնակցության համաձայնության թերթիկը:

Նշել, որ ֆոկուս խմբային քննարկումների ընթացքը ձայնագրվելու է (հնարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

Գրանցել մասնակիցների թիվը, տալ կազմի հակիրճ ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, սեռը, տարիքը:

- Խնդրում եմ, ներկայացե՛ք՝ կառույց, պաշտոն, մասնագիտություն, այլ զբաղվածություն: Ի՞նչ առնչություն ունեք երիտասարդական ոլորտին, երիտասարդների հետ աշխատանքին:
- Կրթական ի՞նչ ծառայություններ է մատուցում Ձեր կառույցը: Ինչպե՞ս են մշակվում այդ ծառայությունները:
- Խնդրում եմ՝ ասեք, Ձեր կարծիքով, այսօրվա հայաստանյան երիտասարդությունը, ընդհանուր առմամբ, ի՞նչ կարիքներ ունի: Խնդրում եմ՝ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Չբաղվածության և աշխատաշուկայում ներգրավվելու առումով երիտասարդներն ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ՝ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Տեղեկատվության հասանելիության/ստացման մակարդակում ի՞նչ կարիքներ ունեն երիտասարդները: Խնդրում եմ՝ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Այսօր երիտասարդներն իրենց կրթական գործընթացների կազմակերպմանն առնչվող ի՞նչ կարիքներ ունեն: Խնդրում եմ՝ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Այսօր երիտասարդներն ինչպիսի՞ կրթության կարիք ունեն՝ բովանդակություն, ձևաչափ: Խնդրում եմ՝ նշեք, թե Գյումրու երիտասարդներն ինչպիսի՞ առանձնահատուկ կարիքներ կամ խնդիրներ ունեն:
- Համավարակն ի՞նչ կարիքների և խնդիրների առաջ է կանգնեցրել երիտասարդներին: Այդ խնդիրներն ինչպե՞ս կարելի է լուծել:
- Համավարակն ինչպե՞ս ազդեց կրթական ծառայությունների մատուցման / մոտեցումների վրա: Կրթական ծառայությունների մատուցման գործընթացում ի՞նչ փոփոխություններ եք կատարել համավարակի ընթացքում: Հետագայում ի՞նչ փոփոխություններ է պետք անել:

- Համավարակն ի՞նչ նոր հնարավորություններ ստեղծեց: Եթե Գյումրու երիտասարդների համար առանձնահատուկ հնարավորություն է ստեղծել, ինդրում եմ նշել:
- Պատերազմն ինչպիսի՞ ազդեցություն թողեց երիտասարդների վրա, այդ թվում՝ Գյումրու: Ինչպե՞ս կարելի է ուժեղացնել դրական ազդեցությունը և ինչպե՞ս չեզոքացնել բացասական ազդեցությունը:
- Երիտասարդների կարիքների, խնդիրների վերաբերյալ կա՞ն մտքեր, որոնց չանդրադարձանք, եթե այո, ինդրում եմ, ներկայացրեք:

Շնորհակալություն հայտնել մասնակցության համար:

Ակտիվ երիտասարդների հետ խմբային քննարկման ուղեցույց

Քննարկման **նպատակն** է բացահայտել համայնքի ակտիվ երիտասարդների կարիքներն ու ձգտումները:

Նշում մոդերատորի համար

Ներկայանալ՝ անունը, ազգանունը, կազմակերպությունը: Ներկայացնել քննարկման նպատակը, արդյունքները, տևողությունը: Հավաստիացնել, որ կպահպանվի քննարկման ընթացքում արտահայտված անհատական կարծիքների գաղտնիությունը: Ներկայացնել մասնակցության համաձայնության թերթիկը:

Նշել, որ ֆոկոս խմբային քննարկումների ընթացքը ձայնագրվելու է (հնարավորության դեպքում նաև տեսագրվելու է): Ստացված տեղեկությունները սղագրվելու և վերլուծվելու են:

Գրանցել մասնակիցների թիվը, տալ կազմի հակիրճ ընդհանուր նկարագիրը, այդ թվում՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, սեռը, տարիքը:

Ներածական հարցեր՝

1. Խնդրում եմ, ներկայանալ՝ կրթություն, զբաղվածություն, հետաքրքրություններ:
2. Գյուժրիում ձեր տարիքի երեխաները, երիտասարդներն ի՞նչ հիմնական խնդիրներ ունեն, ի՞նչ ցանկություններ ունեն:
3. Երիտասարդների հարցերով զբաղվող ինչպիսի՞ կառույցներ են գործում Գյուժրիում: Ինչպե՞ս կգնահատեք այդ կառույցների աշխատանքները: Խնդրում ենք մանրամասնել:

Կրթական գործընթացներ՝

1. Բացի հիմնական կրթությունից՝ դպրոց, մասնագիտական ուսումնական հաստատություն, այլ կրթական կենտրոններ հաճախո՞ւմ եք Գյուժրիում: Եթե այո, նշեք, եթե ոչ՝ խնդրում եմ նշեք, թե ինչո՞ւ: Որքանո՞վ եք գոհ այդ կենտրոնների աշխատանքից: Ի՞նչը կցանկանայիք, որ փոխվեր այդ կառույցների աշխատանքում: Խնդրում ենք մանրամասնել:
2. Այլ քաղաքի կրթական կենտրոններ հաճախե՞լ, դասընթացների մասնակցե՞լ եք: Ի՞նչ դասընթացների եք մասնակցել: Ինչպե՞ս եք տեղեկացել այդ դասընթացների մասին: Որքանո՞վ էին օգտակար այդ դասընթացները: Ի՞նչը կփոխեիք այդ դասընթացների մեջ:
3. Առհասարակ, Գյուժրիում ինչպե՞ս են երիտասարդները տեղեկություն ստանում քաղաքում իրականացվող միջոցառումների, ծրագրերի վերաբերյալ:
4. Ինչպե՞ս եք տեղեկացել այսօրվա հանդիպման մասին: Ինչո՞վ է պայմանավորված այս հանդիպմանը ձեր մասնակցությունը:
5. Կա՞ն երիտասարդներ, որոնք, ըստ Ձեզ, դուրս են մնում Գյուժրի քաղաքի կյանքից, տեղեկատվությունից: Եթե այո, խնդրում ենք մանրամասնել:

Ժամանցային հնարավորություններ`

1. Որտե՞ղ և ինչպե՞ս են երիտասարդները Գյումրիում ժամանակ անցկացնում: Ինչպե՞ս կգնահատեք այդ վայրերի անվտազնությունը, ապահովությունը: Ի՞նչը կցանկանայիք, որ փոխվեր:
2. Խնդրում ենք ներկայացնել ձեր սովորական օրը, ինչո՞վ եք զբաղվում օրվա ընթացքում: Ինչո՞վ կուզենայիք զբաղվել օրվա ընթացքում, որ չեք կարողանում: Խնդրում եմ մանրամասնել:

Կամավորություն, երիտասարդական նախաձեռնություններ`

1. Ունե՞ք կամավորության փորձ: Եթե այո, ինչո՞րում եմ ներկայացնել: Ի՞նչ տվեց այդ փորձը: Կցանկանայի՞ք նմանատիպ փորձ կրկին ունենալ:
2. Ինչ-որ նախաձեռնություններ ունեցե՞լ եք: Խնդրում եմ ներկայացնել: Իսկ ի՞նչ մտքեր, գաղափարներ ունեք, որ կցանկանայիք իրականացնել:
3. Կա՞ն հնարավորություններ նման գաղափարները կյանքի կոչելու: Քննարկե՞լ եք այդ մտքերը որևէ մեկի հետ: Եթե այո, ո՞ւմ և ընթացք ստացե՞լ է, եթե ոչ, ինչո՞ւ: Դիմե՞լ եք որևէ կառույցի այն իրականացնելու համար: Եթե ոչ, ինչո՞ւ, եթե այո, ո՞ւմ, նկարագրեք ընթացքը:
4. Համավարակն ինչպե՞ս ազդեց ձեզ վրա: Համավարակի ընթացքում ի՞նչը փոխվեց ձեր կյանքում: Ի՞նչ զգացողություններ ունեիք համավարակի ընթացքում, երբ հայտարարված էր lock down: Այդ օրերին ովքե՞ր էին Ձեզ աջակցող մարդիկ, կառույցները: Համավարակի ավարտից հետո ի՞նչը կփոխվի Ձեր կյանքում:
5. Խնդրում եմ՝ կիսվեք պատերազմական օրերին Ձեր հիմնական զգացողություններով: Հետևո՞ւմ էիք նորություններին: Եթե այո, ինչպե՞ս, եթե ոչ, ինչո՞ւ: Պատերազմից հետո ինչպե՞ս և ի՞նչը պետք է փոխել երիտասարդների հետ տարվող աշխատանքներում:
6. Ամփոփենք այսօրվա քննարկումը, կա՞ն մտքեր, որ կիսատ կամ ոչ լիարժեք քննարկեցիք, ինչո՞րում ենք ներկայացնել:

Շնորհակալություն հայտնել մասնակցության համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Ակտիվ երիտասարդներ

1. Գյումրու ԵՆԿ ՀԿ անդամ, ծրագրավորող, Նաոյա Կոստանյան
2. Հաշվապահական ոլորտ, բանաստեղծ, Լևոն Բեժանյան
3. Զբոսաշրջության ոլորտ, Գոռ Մուրադյան
4. Երիտասարդ մայր, հատուկ մանկավարժ, Կարինե Հակոբյան
5. «Ռեսթարտ Գյումրի», Շիրակի պետական համալսարան, Մարգարիտ Խոջոյան
6. «Իրական դպրոց», Գյումրու ավիամոդելավորման խմբակ, Սոֆի Մինասյան
7. ՏՏ ոլորտ, գիտնական, Էդգար Հարությունյան
8. «Տիգրան Աբգարյանի անվան մարտական պատրաստության ակումբ», Վահե Սերոբյան:

Հիմնական տեղեկատուներ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության ներկայացուցիչ Արմինե Պետրոսյան
2. ՀՀ Շիրակի մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Լիլիթ Գորգինյան
3. Գյումրու համայնքապետարանի Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Թովմասյան
4. «Երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մակարյան
5. Երիտասարդական աշխատող, փորձագետ Աննա Եղոյան:

Երիտասարդական ՔՀԿ-ների ցանկ

1. «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղ, Լուիզա Պետրոսյան
2. «Ազգային արժեք ակումբ», Անահիտ Հովհաննիսյան
3. «Առավոտ» ՀԿ, Արուսյակ Գրիգորյան
4. «Արմատ» լաբորատորիա, Սոնա Հարությունյան
5. «Արևամանուկ» հոգեբանասոցիալական աջակցության հիմնադրամ, Աննա Թումանյան
6. Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, Վալյա Մարտիրոսյան
7. «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, Գայանե Առաքելյան

8. Գյումրու «Հայորդյաց տուն», Աստղիկ Եղիգարյան
9. «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Յերմինե Պապիկյան
10. «Կարիտաս-Արեգակ» բարեգործական հիմնադրամ, Մարինե Աթայան
11. ՀԱԵ Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոն, Կարինե Տոնոյան
12. «Նոր լույս» ՀԿ, Ալինա Մարտիրոսյան
13. «Վորլդ Վիժն Հայաստան» Գյումրու տարածքային զարգացման ծրագիր, Մարիետա Գևորգյան:

Կրթական ծառայություն մատուցողների ցանկ

1. Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոն, Ամալյա Ադամյան
2. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան, Անուշ Մկրտչյան
3. Գյումրու տեխնոլոգիական կենտրոն, Բելլա Հարությունյան
4. Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան գյուղական համայնքների զարգացման ծրագիր (Շիրակի մարզ), Արթուր Լալայան
5. Շիրակի պետական համալսարան, Նազելի Ավետիսյան
6. Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ, Էմմա Պետրոսյան:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

Բարև Ձեզ, ես _____ եմ: Ներկայացնում եմ Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը: Գյուժրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի պատվերով, մեր կազմակերպությունն իրականացնում է Գյուժրու երիտասարդների կարիքների ու ձգտումների վերաբերյալ հետազոտություն: Հետազոտության նպատակն է պարզել, թե որոնք են Գյուժրու երիտասարդների հիմնական կարիքները, խնդիրները, ինչպես նաև ցանկություններն ու ձգտումները: Ձեր կարծիքն ու պատկերացումներն այս հարցերի շուրջ կարևոր են մեր հետազոտական թիմի համար:

Հետազոտությունն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած դրամաշնորհի շրջանակներում և ուղղված է Գյուժրու երիտասարդական տեղական քաղաքականության մշակման համար փաստական հենք ստեղծելուն:

Հետազոտությունն իրականացնելու համար մշակվել են հարցաշարեր, որոնք անցել են հատուկ փորձարկում:

Ցանկանում ենք ստանալ Ձեր համաձայնությունը Ձեզ հետ հարցազրույց վարելու համար: Հարցումն անանուն է, Ձեր կողմից ներկայացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացված ձևով: Ձեր անունը նշվելու է միայն հետազոտության մասնակիցների ցանկում, եթե չեք առարկում:

Մենք երաշխավորում ենք, որ հարցման ընթացքում, որը կտևի մոտ 1 ժամ, ստացված տեղեկությունները չեն հրապարակվելու և չեն տրամադրվելու այլ անձանց ու կազմակերպությունների, բացառությամբ Գյուժրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի, և միայն օգտագործվելու են ընդհանրացված ձևով վերլուծական նպատակով:

Տեղեկատվությունը չկորցնելու և վերլուծական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար խնդրում ենք Ձեր թույլտվությունը Ձեզ հետ հարցազրույցը ձայնագրելու համար, հարցերի պատասխանները գրանցվելու են ձայնագրիչով:

Հետազոտությանը Ձեր մասնակցությունը կամավոր է:

Այս հետազոտության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում կարող եք զանգահարել՝ 093-75-37-40 հեռախոսահամարով կամ գրել հետևյալ էլ. հասցեին՝ info@e-research.am

Նախապես հայտնում ենք մեր շնորհակալությունը ժամանակ տրամադրելու և հարցերին պատասխանելու համար:

Նշում հարցազրուցավարի համար

Թերթիկի բովանդակությունը ներկայացնել հետազոտության մասնակիցներին և ստանալ բանավոր համաձայնություն կամ համաձայնություն էլ. փոստի միջոցով:

Գյուժրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի մասին

Գյուժրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2008 թ.-ին մի խումբ արհեստավարժ, ստեղծագործող, նորարար և մոտիվացված երիտասարդների կողմից, որոնք գիտակցում էին, որ Հայաստանի ուժեղ ապագան կերտելու ուղին երիտասարդներին ընտրության, իրենց նպատակներին հասնելու ու հասարակության լիիրավ անդամ դառնալու հնարավորությունների տրամադրումն է: Ներկայումս կազմակերպության առաքելությունն է՝ նպաստել երիտասարդների կյանքի որակի բարձրացմանը՝ երիտասարդակենտրոն մոտեցմամբ:



Գյուժրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ

Հայաստան, Գյուժրի, 3101, Շահումյան 69

Հեռ.՝ (+374 95) 91-91-97

Էլ. հասցե՝ yic@yic.am

www.yic.am

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի մասին

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը հետազոտական կենտրոն է՝ մասնագիտացած կրթության, երիտասարդության, երեխաների հարցերով: Կենտրոնը հիմնադրվել է 2012 թ. և իրականացրել է տեղական և միջազգային մի շարք հետազոտություններ՝ հանրակրթության, բարձրագույն կրթության, ներառական կրթության, երիտասարդության, երեխաների պաշտպանության, ինչպես նաև աշխատաշուկայի վերաբերյալ:



Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն

Հայաստան, Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 26/3

Հեռ.՝ (+374 93) 75-37-40

Էլ հասցե՝ info@e-research.am

www.e-research.am

